ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՀՀ կրթության և գիտության նախարարի

2012թ.23.01 N 50-Ա/Ք հրամանի

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ <<ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>> ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ԾՐԱԳԻՐ

(6-9-**րդ դասարաններ**)

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
<<ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>>

ԱՌԱՐԿԱՅԻ ՉԱՓՈՐՈՇԻՉ
(6-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ)

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

<<Համաշխարհային պատմություն>> առարկայի հիմնական դպրոցի չափորոշիչը լրամշակվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Կրթության մասին օրենքը, ՀՀ Հանրակրթության մասին օրենքը և Հանրակրթության պետական չափորոշչի հանրակրթական հիմնական դպրոցի ծրագրի հայեցակարգային դրույթները, սկզբունքներն ու պահանջները:

Համաշխարհային պատմության չափորոշիչը ներառում է՝

- առարկայի հայեցակարգը,
- առարկայի ուսումնական նպատակները,
- առարկայի բովանդակային պարտադիր միջուկը,
- ուսումնական գործունեության տեսակները,
- սովորողների պատրաստվածությանը (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) ներկայացվող պահանջների և արժեքային համակարգի նկարագրությունները, ընդ որում՝ գիտելիքներին, կարողություններին և հմտություններին վերաբերող պահանջները ներկայացված են երեք՝ Ա, Բ, Գ խմբերով, որոնք համապատասխանում են՝ Ա - նվազագույն, Բ - միջին, Գ - բարձր պատրաստվածությանը,
- գրականության ցանկը:

Դասընթաց

Պատմության ուսուցումը հանրակրթական դպրոցում հարուստ ավանդույթներ ունի: <<Համաշխարհային պատմություն>> առարկայի բովանդակության մշակման համար հայեցակարգային նշանակություն են ունեցել հետևյալ սկզբունքները.

1. Հայեցակարգի հիմքում դրված է առարկայի բովանդակային և գիտա-մեթոդական դասավանդման դրական փորձը:
2. Համաշխարհային պատմության հանրակրթական նշանակության գիտակցումը ևս անհրաժեշտ պայման է ընդհանուր հայեցակարգի մշակման գործում: Պատմությունը մի գիտություն է, որը միշտ ունեցել է և ունի հասարակական բազմաշերտ սպառում:
3. Պատմությունն աշխարհայացք ձևավորող գիտություն է, որի տևական գործընթացը՝ մինչև հանրակրթության ավարտը, ևս հաշվի է առնված առարկայի բովանդակության ձևավորման գործում:
4. Պատմագիտությունը, որպես հասարակական մշտական արձագանքներով բնորոշվող գիտություն, անընդմեջ զարգացման գործընթացում է: Հետևաբար, առարկայի հայեցակարգը պետք է կայուն գիտական հիմք ունենա:
5. Արդի աշխարհում պատմության բովանդակության հիմնախնդիրը ձեռք է բերել միջազգային նշանակություն, առանձին դեպքերում դարձել միջպետական հարաբերությունների քննարկման առարկա:

Համաշխարհային պատմություն առարկայի դպրոցական դասընթացի բովանդակային գիտական հղացքը, որպես ընդհանուր հայեցակարգի բաղկացուցիչ մաս, հանգում է հետևյալ գլխավոր դրույթներին.

ա. Ցանկացած գիտության նպատակը ճշմարտության վերհանումն է, որն էլ օգնում է մարդուն, ազգին և պետությանը բարգավաճելու: Սովորողներին անհրաժեշտ է հաղորդել միայն պատմական ճշմարտությունը:

բ. Պատմական ժամանակաշրջանների գլխավոր դեպքերը, գործընթացները և երևույթները բացատրել և հիմնավորել նախևառաջ քաղաքակրթական արժևորումներով: Հասարակական-տնտեսական կացութաձևերի մասին մարքսիստական ուսմունքի օգնությամբ միշտ չէ, որ հնարավոր է բացահայտել պատմական ճշմարտությունը:

գ. Քաղաքակրթական մոտեցումներում վճռական գործոնը համարել ազգային քաղաքակրթական նվաճումները: Ընդսմին՝ հայկականը դիտարկել որպես միջքաղաքակրթական (թե՛ ազգային և թե՛ տարածաշրջանային առումներով) մի ուրույն աշխարհ, որը մաս է կազմել համաշխարհային պատմության հիմնական գործընթացներին:

դ. Համաշխարհային պատմության գործընթացներում ամենավճռական սոցիալական գործոն համարել ազգը, նրա հասարակական կառույցները և անընդմեջ պայքարը հանուն գոյատևման ու բարգավաճման:

ե. Համաշխարհային պատմության դասընթացում գլխավոր ուշադրությունը դարձնել պատմական զարգացման տվյալ փուլում առաջին գծում գտնվող ազգերին

և հասարակություններին: Միևնույն ժամանակ անդրադառնալ Հայաստանի հարևան ազգերի և պետությունների պատմությանը:

զ. Հայոց և համաշխարհային պատմության գործընթացները վերլուծել և ներկայացնել մեկ պատմական ամբողջության մեջ՝ միասնական հայեցակարգի շրջանակում, ինչը չի հակասում դրանք տարբեր առարկաներով դասավանդելու իրողությանը:

<<Համաշխարհային պատմություն>> առարկայի դասավանդման տեղն ու դերը հանրակրթության համակարգում որոշելու, ինչպես նաև ուսումնական նյութի ծավալի և դասավանդման մեթոդիկայի հստակեցման առումով կարևոր է հետևյալ մոտեցումների պահպանումը.

1. Համաշխարհային պատմության դասընթացը համարել հանրակրթության անկապտելի մասը, առանց որի անհնարին է միջնակարգ (մասնավորապես՝ պատմական) կրթությունը:
2. Հստակեցնել հանրակրթական մյուս առարկաների հետ համաշխարհային պատմության միջառարկայական կապերը: Դրանցում էական են առնչությունները աշխարհագրության (պատմական և արդի քաղաքական աշխարհագրություն), լեզուների (բառապաշարի հարստացում, պատմական օտարածին տերմիններ), իրավագիտության (պետության և իրավունքի պատմություն), հասարակագիտական այլ դասընթացների հետ:
3. Շատ կարևոր է պատմական կրթության հաջորդականության ապահովումը հիմնական և ավագ դպրոցներում, որը հնարավորություն կտա պահպանել գիտականությունը, ինչպես նաև նպաստել սովորողների պատմական մտածողության ու գիտակցության ձևավորմանը:
4. Պատմության յուրաքանչյուր դաս պետք է լուծի որոշակի ուսումնադաստիարակչական խնդիր, որի հստակեցումը դասագրքերի, ուսումնամեթոդական ձեռնարկների հիմնախնդիրն է:

Հանրակրթական դպրոցում պատմագիտական կրթության էությունը կազմում են այն հիմնական բովանդակային ուղղությունները, որոնք, պատմության ճանաչողության մեթոդաբանության համաձայն, որոշում են գիտելիքների ամբողջությունը, դրանց ներկայացման և յուրացման մակարդակը: Այդպիսի բովանդակային ուղղություններ կարելի է համարել պատմական ժամանակը, պատմական տարածությունը և պատմական զարգացումը:

- Պատմական ժամանակ.

Տարիների հաշվումը պատմության մեջ և պատմական դեպքերի ու գործընթացների պարբերացումը, պատմական իրադարձությունների ժամանակագրական հաջորդականությունն ու տևողությունը, պատմական իրադարձությունների համընթացությունը:

- Պատմական տարածություն.

Պատմական զարգացման աշխարհաքաղաքական (գեոպոլիտիկ) գործոնները, պատմական որոշ գործընթացների տեղայնությունն ու համընդհանրությունը (գլոբալությունը):

- Պատմական զարգացում.

ներկայացվում է հետևյալ կողմերով.

- մարդաբանական, այսինքն՝ մարդու ծագումը և զարգացումը.
- սոցիալական, այսինքն՝ հասարակության, նրա սոցիալական կառուցվածքի ձևավորումն ու զարգացումը, սոցիալական շարժումները պատմության մեջ.

- հոգեբանական, այսինքն՝ անհատի ձևավորումը և նրա դերը տարբեր պատմական դարաշրջաններում, մարդկանց գործողությունների դրդապատճառները պատմության մեջ.
- հասարակարգային, այսինքն՝ մարդկանց աշխատանքային գործունեության էվոլյուցիան, նյութական արտադրության զարգացումը և արտադրական հարաբերությունների փոփոխությունը.
- մշակութաբանական, այսինքն՝ հոգևոր և նյութական մշակույթի զարգացումը, ժողովուրդների մշակույթի, աշխարհի քաղաքակրթությունների հաջորդայնությունն ու փոխազդեցությունը.
- ազգաբանական, այսինքն՝ էթնիկական ընդհանրությունների ձևավորումն ու դրանց զարգացման գործընթացը տարբեր պատմական դարաշրջաններում.
- պետական-քաղաքական, այսինքն՝ պետականության սկզբնավորումն ու զարգացումը, տարբեր երկրների քաղաքական պատմության հիմնական միտումները.
- աշխարհաքաղաքական, այսինքն՝ տարբեր երկրների, ժողովուրդների, քաղաքակրթությունների փոխհարաբերությունների պատմությունը, պատերազմի և խաղաղության հիմնախնդիրը.
- փիլիսոփայական, այսինքն՝ մարդու կողմից շրջակա աշխարհի ճանաչողության պատմությունը, կրոնական և հասարակական ուսմունքները.
- արժեքաբանական, այսինքն՝ ազգային և համամարդկային արժեքների ձևավորումը հասարակության մեջ:

ԱՌԱՐԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հանրակրթական դպրոցում պատմության դասավանդման նպատակներն են.

- սովորողների կողմից համաշխարհային պատմական գործընթացի և դրա կարևոր օրինաչափությունների վերաբերյալ գիտելիքների հիմունքների տիրապետումը.
- ըստ առանձին տարածաշրջանների ու երկրների, մարդկային հասարակության զարգացման կոնկրետ-պատմական այն առանձնահատկությունների իմացությունը, որոնք վճռորոշ դեր են ունեցել մշակույթի զարգացման և քաղաքակրթական նվաճումների ձեռքբերման մեջ.
- սովորողների մեջ արժեքային կողմնորոշման և անհատական համոզմունքների ձևավորում՝ աշխարհի տարբեր ժողովուրդների պատմամշակութային ավանդույթների նկատմամբ հարգանքի, քաղաքացիական և ազգային ինքնագիտակցության, մարդասիրական գաղափարների, մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների դաստիարակության հիման վրա:

Ելնելով վերը նշված նպատակներից՝ դպրոցում պատմական կրթության համար առաջնային են համարվում հետևյալ խնդիրները.

- սովորողներին տեղեկություններ տալ մարդկության պատմության մեջ եղած կարևորագույն իրադարձությունների, երևույթների, գործընթացների, գաղափարների, հասկացությունների վերաբերյալ՝ ըստ հասարակության կենսագործունեության հիմնական ուղղությունների.
- սովորողների մեջ զարգացնել ընդհանուր ուսումնական և պատմության ուսումնասիրությանն ուղղված առանձին կարողություններ և հմտություններ, որոնք անհրաժեշտ կլինեն պատմությունից գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման համար.
- նպաստել սովորողի՝ անհրաժեշտ սոցիալական որակներ ունեցող անձի կայացմանը, ով գիտակցում է հիմնարար արժեքների առաջնայնությունը և ձգտում իր կրթվածության բարձրացմանը.
- սովորեցնել պատճառահետևանքային կապեր գտնել պատմական գործընթացներում, հասկանալ ու բացատրել տարբեր երկրների ու ժողովուրդների զարգացման ընթացքը և առանձնահատկությունները պայմանավորող գործոնները:

ԱՌԱՐԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՄԻՋՈՒԿ

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (6 – **րդ դասարան**)

Ներածություն: Համաշխարհային պատմության ուսումնասիրության առարկան, պարբերացումը: Հին աշխարհի պատմության հիմնական փուլերը, բովանդակությունը:

Նախնադար: Հնագույն մարդիկ: Տոհմ: Անցում արտադրող տնտեսության: Հասարակական կյանքի կազմակերպման ձևերը: Կրոնական պատկերացումները, հավատալիքները: Ցեղային միություններ: Հասարակության շերտավորումը, պետության առաջացումը:

Հին Արևելք: Քաղաքակրթական հիմնական կենտրոնները: Եգիպտական աշխարհակալ պետությունը: Շումերական քաղաք-պետությունները: Աքքադի աշխարհակալ պետությունը: Բաբելոնի թագավորությունը: Նոր Ասորեստան: Նոր Բաբելոնիա: Խեթական պետությունը: Խեթերը և հայկական պետությունները: Միտաննի: Փյունիկիա:

Հնդկաստանը Ք.ա. II հազարամյակում. արիացիների ներգաղթը: Հին Չինաստանի պետությունները:

Իրան: Կայսրության կազմավորումը. Կյուրոս Մեծ: Դարեհ I: Աքեմենյան տերության անկումը:

Հին Արևելքի մշակույթը: Դիցարանների կազմավորումը: Կրոնը մարդկանց կյանքում: Գրի առաջացումը, տեսակները: Ճարտարապետություն: Քանդակագործություն: Գրական ստեղծագործություններ: Գիտական գիտելիքներ:

Հին Հունաստան: Երկիրը և ազգաբնակչությունը: Կրետե-միկենյան դարաշրջանը: Հոմերոսյան դարաշրջանը: Պոլիսային կարգի հաստատումը: Վաղ տիրանիան. անցում ազնվապետությունից ժողովրդավարության: Հունական մեծ գաղութացումը: Հին Սպարտան: Աթենքը Ք.ա. VII-VI դարերում:

Հույն-պարսկական պատերազմները:

Պերիկլեսյան դարաշրջանի Աթենքը:

Դասական դարաշրջանի մշակույթը: Կրոնը: Կրթությունը: Գրականությունը: Արվեստը: Մարմնակրթությունը (սպորտ):

Հելլենիզմ: Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և տերության կազմավորումը: <<Հելլենիզմ>> հասկացությունը: Հելլենիստական աշխարհը: Հելլենիստական մշակույթի կենտրոնները:

Հին Հռոմ: Հին Իտալիա. բնական պայմանները և ազգաբնակչությունը: Հռոմը թագավորական դարաշրջանում: Հանրապետական կարգի հաստատումը:

Հռոմեական քաղաք-պետությունը Ք.ա. V-II դարերում: Պայքար Կարթագենի դեմ և միջերկրածովյան ավազանի նվաճումը: Քաղաք-պետությունից դեպի տերություն:

Հանրապետական կարգի ճգնաժամը: Սպարտակի ապստամբությունը:

Անցում պրինցիպատին: Առաջին եռապետությունը: Քաղաքացիական պատերազմը և Կեսարի բռնապետությունը (դիկտատուրա): Օկտավիանոս Օգոստոսի պրինցիպատը:

Կայսրության <<ոսկեդարը>>: Բարբարոսների արշավանքները: Արևմտահռոմեական կայսրության անկումը:

Կրոնը: Բազմաստվածություն: Քրիստոնեության առաջացման և տարածման պատմական պայմանները:

Հռոմեական մշակույթը: Կրթությունը: Գրականությունը: Գիտությունը: Ճարտարապետությունը և կերպարվեստը:

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (7-**րդ դասարան**)

Ներածություն: *Միջին դարերի պատմության հիմնական փուլերը, բովանդակությունը:*

Վաղ միջնադար: *Արևմտյան Հռոմեական կայսրության փլուզումը:* Ժողովուրդների մեծ գաղթը: Բարբարոսները Իտալիայում:

Քրիստոնեական եկեղեցին: Քրիստոնեական եկեղեցու կառույցը:

Բյուզանդիան Հուստինիանոս I-ի դարաշրջանում: Կայսերական իշխանությունը: Հուստինիանոս I-ի պատերազմները:

Ֆրանկական պետությունը: <<Ծույլ թագավորները>>: Կարլոս Մեծի պատերազմները. Վերդենի բաժանքը: Կարոլինգյան Վերածնունդը:

Վիկինգների դարաշրջանը: Անհանգիստ քոչվորները: Արևմտյան և հարավային սլավոնները: Վիկինգների դարաշրջանը:

Բյուզանդիայի վերելքը (Հայկական հարստությունը): Բարսեղ I: Հայկական (Մակեդոնական) Վերածնունդը:

Հին Ռուսիան: Հին Ռուսիայի ծնունդը: Ռուսիայի մկրտությունը: Յարոսլավ Իմաստուն. <<Ռուսկայա պրավդա>>:

Սրբազան Հռոմեական կայսրությունը: Գերմանական պետության առաջացումը: Սրբազան Հռոմեական կայսրության հռչակումը:

Միջնադարը ծաղկման ժամանակաշրջանում: *Ավատատիրական հասարակարգը,* ավատատիրական աստիճանակարգությունը: Գյուղական համայնքը: Միջնադարի քաղաքները, համքարություններ:

Խաչակրաց շարժումը: Շարժման նախադրյալները: Առաջին արշավանքը. խաչակրաց պետությունների առաջացումն Արևելքում: Շարժման արդյունքները:

XIII դարի նշանավոր փիրակալները: Պապականությունը հզորության գագաթնակետին: Ֆրիդրիխ II: Լյուդովիկոս IX:

Քրիստոնեական եկեղեցու պառակտումը: Եկեղեցու պառակտումը. կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիներ: Հերետիկոսներ. ինկվիզիցիա: <<Մուրացիկ>> միաբանություններ:

Կրթությունը: Վաղ միջնադարի դպրոցը: Համալսարանների առաջացումը, համալսարանական կրթությունը:

Միջնադարի աշունը: Ավատատիրության անկումը: Դասային միապետությունը: *Ազգային պետությունների կազմավորումը:* Ազգային պետությունների առաջացման նախադրյալները: <<Ազգային հերետիկոսություններ>>:

Հարյուրամյա պատերազմը: Պատերազմի սկիզբը: Ժաննա դ'Արկ: Ֆրանսիայի միավորումը:

Բյուզանդիայի անկումը: Լատինական կայսրությունը: Օսմանյան նվաճումները Բալկաններում: Կ.Պոլսի անկումը:

Ռուսական կենտրոնացված պետության կազմավորումը: Մոսկվայի բարձրացումը և դրա նախադրյալները: Իվան IV: Ռոմանովների արքայատոհմի հաստատումը:

Արևելքի երկրները միջնադարում: *Արաբական խալիֆայությունը:* Իսլամի առաջացումը: Արաբական խալիֆայության կազմավորումը: Խալիֆայությունը VIII–X դարերում: Ռեկոնկիստա: Արաբական մշակույթը:

Անհանգիստ քոչվորները: Սելջուկ-թյուրքերը: Մոնղոլական տերությունը: Օսմանյան տերությունը:

Հնդկաստանը, Չինաստանը և Ճապոնիան միջնադարում:

Նոր Եվրոպայի ծնունդը: Աշխարհագրական հայտնագործությունների նախադրյալները: Ամերիկայի հայտնագործումը: Ացտեկներ, մայաներ, ինկեր:

Վերածննդի նախադրյալները: Գրականությունը, արվեստը: Հյուսիսային Վերածնունդը:

Ռեֆորմացիա: Լյութերական եկեղեցու առաջացումը: Ժան Կալվին: Ռեֆորմացիան Անգլիայում: Հակառեֆորմացիա:

Նոր Եվրոպայի ծնունդը: Նիդերլանդական հեղափոխությունը: Երեսնամյա պատերազմը: Եվրոպայի քաղաքական նոր քարտեզը:

Նոր գիտությունը: Առաջին գիտական հեղափոխությունը: Նոր գիտության հիմնադիրները:

ՆՈՐ ԴԱՐԵՐ (8-**րդ դասարան**)

Ներածություն: Արդյունաբերական հասարակությունը, զարգացման շրջափուլերը:

Արդյունաբերական հասարակության առաջին շրջափուլը (XVII **դար**-XIX **դարի առաջին կես**): *Արմատական փոփոխություններ տնտեսության մեջ:* Տեխնիկայի առաջընթացը: Գյուղատնտեսության վերազինումը: Արդյունաբերական հեղաշրջումը:

Արդյունաբերական զարգացման հետևանքները: Փոփոխություններ հասարակական կյանքում: Մարդկանց կենսապայմանների բարելավումը:

Լուսավորության դարաշրջանը: Լուսավորական գաղափարախոսությունը: Լուսավորյալ արքաների դարաշրջանը:

Հասարակության վերակառուցման հեղափոխական ուղին: <<Հեղափոխություն>> հասկացությունը: Անգլիական հեղափոխությունը: Հյուսիսամերիկյան գաղութների ազատագրական պատերազմը, ԱՄՆ-ի ձևավորումը:

Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Նախադրյալները և սկիզբը: Հեղափոխության սահմանադրական շրջափուլը: Հեղափոխության հանրապետական շրջափուլը (1792-1799 թթ.):

Նապոլեոնի դարաշրջանը: Նապոլեոնի վարչակարգը, բարեփոխումները: Կայսրության կազմավորումը և հեղափոխական գաղափարների տարածումը Եվրոպայում: Կայսրության կործանումը:

Հետադիմությունը, հեղափոխությունը և հասարակական փոխհամաձայնությունը Եվրոպայում (1815-1850 թթ.): Վիեննայի վեհաժողովը: Անգլիան և հասարակության զարգացման բարեփոխումների ուղին:

Ժողովրդավարական և ազգային հեղափոխությունները Եվրոպայում: 1848–1849 թթ. հեղափոխությունները Ֆրանսիայում և գերմանական պետություններում: Ազգային հեղափոխությունները Եվրոպայում:

Արևելքի ավանդական հասարակությունները: <<Ավանդական հասարակություն>> հասկացությունը: Օսմանյան կայսրությունը: Իրանը: Հնդկաստանը: Չինաստանը:

Միջազգային հարաբերությունները: Հարաբերությունների ձևերը և կարգավորման հիմքերը: Գաղութային համակարգի ձևավորման սկիզբը:

Մշակույթը: Կրթական համակարգը: Հիմնարար և հումանիտար գիտությունների զարգացումը: Գեղարվեստական գրականությունը, երաժշտությունը, կերպարվեստը: Ճարտարապետությունը:

Առաջավոր արդյունաբերական երկրները և աշխարհը XIX **դարի երկրորդ կեսին և** XX **դարի սկզբին**: *Արդյունաբերական հասարակության զարգացման երկրորդ շրջափուլը:* <<Եվրոպա>> հասկացությունը. ընդհանուրը և առանձնահատուկը: Աշխարհի անհավասարաչափ զարգացումը:

Փոփոխություններ տնտեսության մեջ և սոցիալական կառուցվածքում: Գիտության և տեխնիկայի նվաճումները, դրանց կիրառումը արտադրության մեջ: Տնտեսական զարգացման գլխավոր արդյունքները: Սոցիալական տեղաշարժերը:

Քաղաքական կյանքի զարգացումը: Պահպանողականներ և ազատականներ (լիբերալներ): Կուսակցությունների ստեղծումը և դերը քաղաքական կյանքում: Ընտրական իրավունքի ընդլայնումը: Բանվորական շարժումները և նրանց գաղափարախոսները:

Հասարակական-քաղաքական շարժումները Եվրոպայում և ԱՄՆ-ում: Ստրկության վերացումն ԱՄՆ-ում: Հասարակական ճգնաժամը Ֆրանսիայում. Փարիզի կոմունան: 1905-1907 թթ. հեղափոխությունը Ռուսաստանում:

Ազգային նոր պետությունների առաջացումը Եվրոպայում: Գերմանիայի միավորումը: Իտալիայի միավորումը: Բալկանյան ժողովուրդների անկախության գործընթացը, արդյունքները:

Ազգային հիմնախնդիրը բազմազգ պետություններում: Բազմազգ պետություն: Ավստրո–Հունգարիա երկմիասնական պետության առաջացումը: Ռուսական կայսրությունը:

Արևելյան հասարակությունների արդիականացման փորձերը: Օսմանյան կայսրության բարեփոխումների ձախողումը: Երիտթուրքական շարժումը, 1908թ. հեղաշրջումը: 1905-1911 թթ. իրանական հեղափոխությունը: Ճապոնիայի նորացումը և հզորացումը: Չինաստանի հասարակական-քաղաքական բարեփոխման գործընթացը:

Միջազգային հարաբերությունները XIX դարի վերջին և XX դարի սկզբին: Աշխարհի գաղութային բաժանման ավարտը: Հակասությունների սրումը տերությունների միջև: Հարաբերությունների կարգավորման նոր փորձերը: Ռազմաքաղաքական դաշինքների առաջացումը:

Առաջին աշխարհամարտը: Պատերազմի պատճառները, սկիզբը, գլխավոր ճակատները: Ռազմական գործողությունների գլխավոր հանրագումարները: Առաջին աշխարհամարտի ավարտը և հետևանքները:

Արդյունաբերական առաջավոր երկրների մշակույթը: Կրթության և գիտության զարգացումը: Հիմնարար և հումանիտար գիտությունները: Գրականությունը և արվեստը: Ճարտարապետությունը:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (9-**րդ դասարան**)

Ներածություն: <<Նորագույն պատմություն>> հասկացությունը: Արդյունաբերական հասարակության երրորդ շրջափուլը: Հետարդյունաբերական հասարակությունը:

Աշխարհը արդյունաբերական հասարակության երրորդ շրջափուլում: Վերսալ-վաշինգտոնյան համակարգը որպես նոր աշխարհակարգ: Ազգերի լիգա:

Արևմտյան ժողովրդավարական հասարակությունները 1920-ական թվականներին: Տնտեսական իրավիճակը: Քաղաքական զարգացման միտումները. Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, ԱՄՆ: <<Փոքր ժողովրդավարական հասարակությունները>>:

Ժողովրդավարական հասարակությունները և տնտեսական մեծ ճգնաժամը: Ճգնաժամի պատճառները: Նախագահ Ֆ. Ռուզվելտի <<Նոր կուրսը>>: Ճգնաժամը Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում: <<Փոքր ժողովրդավարական հասարակությունները>> և ճգնաժամը:

Ամբողջատիրական վարչակարգերը Եվրոպայում: Ամբողջատիրության (տոտալիտարիզմ) բովանդակությունը: Ֆաշիզմն Իտալիայում: Նացիոնալ-սոցիալիզմը Գերմանիայում:

ԽՍՀՄ-ը 1922-1939 թվականներին: ԽՍՀՄ կազմավորումը: Տնտեսության վերականգնումը. նէպ-ի տարիները: Արդյունաբերացումը և կոլեկտիվացումը: Քաղաքական համակարգը (ամբողջատիրություն): Սոցիալիզմի խորհրդային մոդելը:

Արևելքի ավանդական հասարակությունները և արդիականացումը: Քեմալական Թուրքիան: Իրանի արդիականացման միտումները: Հեռավոր Արևելքի ու Հնդկաստանի ավանդական հասարակությունները և արդիականացումը:

Մշակույթը 1920-1930-ական թվականներին: Հիմնարար գիտությունները: Հումանիտար գիտությունները: Գրականությունը և արվեստը:

Միջազգային հարաբերությունները: Միջազգային հարաբերությունները 1920-ական թթ.: Վերսալ-վաշինգտոնյան համակարգի փլուզումը: Խաղաղեցման քաղաքականության ձախողումը: Խորհրդա-գերմանական համաձայնագիրը:

Երկրորդ աշխարհամարտը: Աշխարհամարտի պատճառները, հակամարտող դաշինքները: Պատերազմի առաջին շրջափուլը և դրա արդյունքները: ԽՍՀՄ հայրենական մեծ պատերազմը: Հակահիտլերյան միությունը: Երկրորդ աշխարհամարտի ավարտը և արդյունքները:

Աշխարհը սառը պատերազմի ժամանակաշրջանում: Սառը պատերազմը: Երկբևեռ աշխարհի ձևավորումը: ՆԱՏՕ և Վարշավյան դաշինք:

Արևմուտքի երկրները 1945-1980-ական թվականներին: Տնտեսական և քաղաքական զարգացման առանձնահատկությունները: ԱՄՆ-ը: Եվրոպական երկրները. Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա:

ԽՍՀՄ-ը 1945-1985 թվականներին: ԽՍՀՄ-ը հետպատերազմյան առաջին տարիներին: <<Ձնհալի շրջանը>>: Լճացման տարիները:

Վերակառուցումից դեպի փլուզում: Վերակառուցման քաղաքականությունը: Խորհրդային Միության փլուզումը, ԱՊՀ-ի ստեղծումը:

Սոցիալիստական համակարգը: Սոցիալիզմի խորհրդային մոդելի հաստատումը եվրոպական երկրներում: Սոցիալիստական համակարգը, դրա փլուզումը:

Երրորդ աշխարհը: Գաղութային համակարգի փլուզման պատճառները և հետևանքները: Երրորդ աշխարհը:

Արդիականացող Արևելքը: Իրան: Թուրքիա: Արաբական աշխարհի զարգացման միտումները: Արդիականացման չինական մոդելը: Ճապոնիայի զարգացման առանձնահատկությունները: Հնդկաստանը:

Միջազգային հարաբերությունները սառը պատերազմի տարիներին: Միավորված ազգերի կազմակերպությունը: Խաղաղության հիմնախնդիրը: Տարածաշրջանային պատերազմներ, ազգամիջյան բախումներ:

Աշխարհը արդի փուլում: *Արևմուտքի երկրները 1991 թվականից մինչև մեր օրերը:* Արևմուտքի երկրների քաղաքական և տնտեսական զարգացման առանձնահատկությունները: Եվրոպական Միությունը: Արևմուտքի զարգացած երկրները. ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա:

Հետխորհրդային երկրները 1991 թվականից մինչև մեր օրերը: Հետխորհրդային երկրների քաղաքական և տնտեսական զարգացման առանձնահատկությունները: ԱՊՀ-ն 1991 թվականից մինչև մեր օրերը: Հայաստանը և ԱՊՀ երկրները:

Միջազգային հարաբերությունները հետսառըպատերազմյան շրջանում: Նոր աշխարհակարգի խնդիրը: Փոփոխություններ միջազգային հարաբերություններում: Արդի աշխարհի հիմնախնդիրները:

Համաշխարհային մշակույթը XX դարի երկրորդ կեսին–XXI դարի սկզբին: Մշակույթի զարգացման նոր միտումները: Հիմնարար և հումանիտար գիտությունները: Գրականությունը և արվեստը: Փոփոխություններ մարդկանց ապրելակերպում:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ուսուցման գործընթացում՝ կախված թեմայից, դասի նպատակներից, դասարանից, սովորողների առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, տվյալ դասի կամ դասի առանձին հատվածի համար կարող են ընտրվել ուսումնական գործունեության հետևյալ տեսակները՝

- ուսումնական նյութի բացատրում
- լուսաբանում
- քարտեզների դիտարկում, ցուցադրում, պատրաստում
- էքսկուրսիաների անցկացում
- նկարների, ֆիլմերի դիտում, քննարկում
- ուսումնական ձեռնարկների և այլ աղբյուրների ուսումնասիրում
- գործնական աշխատանքների կատարում
- հիմնահարցերի հետազոտություն
- ստեղծագործական աշխատանքների կատարում
- տեխնիկական սարքերով և գործիքներով աշխատանքների կատարում
- խաղերի, մրցույթների, հանդեսների անցկացում
- իրավիճակների և արդյունքների վերլուծում
- գրավոր աշխատանքների կատարում, հաղորդում
- բանավոր և գրավոր հարցադրումների, թեստային աշխատանքների անցկացում
- նոր տեխնոլոգիաների, համակարգչային ծարգրերի օգտագործում
- անհատական և խմբային, ինքնուրույն և համագործակցային աշխատանքների կատարում:

ՍՈՎՈՐՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1 - 2. **Գիտելիքներ**, **կարողություններ**, **հմտություններ**

Ուսումնառության արդյունքում սովորողը պետք է՝

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ---- 6-**րդ դասարան**

ԲԱԺԻՆ 1. **ՆԱԽՆԱԴԱՐ**		
Ա մակարդակ	**Բ մակարդակ**	**Գ մակարդակ**
Իմանա՝ նախնադարի հիմնական շրջափուլերի, նախնադարյան մարդու զբաղմունքների, օգտագործած զենքերի և գործիքների մասին:	***Իմանա՝*** հնագույն մարդու ծագման և բանական մարդու ձևավորման ժամանակաշրջանը, մարդու կարևոր գյուտերի, նվաճումների, արվեստի սկզբնավորման մասին:	***Իմանա՝*** նախնադարյան մարդկանց կրոնական պատկերացումների և հավատալիքների ձևավորման մասին, նստակեցության անցման և պետության առաջացման պատճառները:
Կարողանա՝ բացատրել կենդանիների ընտելացման կարևորությունը, համեմատել քարի դարի տարբեր ժամանակաշրջանների գործիքները:	***Կարողանա՝*** բացատրել տոհմ, ցեղ, ցեղային միություն, տոտեմապաշտություն, ոգեպաշտություն, ֆետիշապաշտություն, արտադրող տնտեսություն հասկացությունները, պարզաբանել մետաղի հեղաշրջող դերը հասարակության զարգացման գործում:	***Կարողանա՝*** համեմատել նախնադարյան հասարակության զարգացման փուլերը, գնահատել □նորքարիդարյան հեղափոխության□ նշանակությունը, պարզաբանել նախնադարյան հասարակության անկման և պետական կազմավորումների առաջացման պատճառները

ԲԱԺԻՆ 2. **ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔ**		
Իմանա՝ Հին Արևելքի երկրների (Եգիպտոս, Միջագետքի պետություններ, Խեթական պետություն, Փյունիկիա, Միտաննի, Իրան, Հնդկաստան, Չինաստան) գոյության ժամանակաշրջանները, նշանավոր քաղաքների անուններ, մշակութային ձեռքբերումների, նշանավոր կառույցների մասին:	***Իմանա՝*** Հին Արևելքի երկրների տեղը քարտեզի վրա, նշանավոր տիրակալների անուններ ու ժամանակաշրջանը, հինարևելյան դիցարանների, գրի առաջացման, ճարտարապետության, քանդակագործության ձեռքբերումների և գիտական նվաճումների մասին:	***Իմանա՝*** Հին Արևելքի երկրների աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների, տնտեսության կարևոր ճյուղերի մասին, պետությունների կազմավորման նախադրյալների, հզորացման, թուլացման ու անկման պատճառների մասին, Հին Արևելքի իրավական համակարգերի, գրի, գիտության և գրավոր հուշարձանների կարևորության մասին:

Կարողանա՝ թվարկել Հին Արևելքի երկրները, բնութագրել բնակիչ-ների զբաղմունքը, մշակութային ձեռքբերումները, նշանավոր կառույցները:	***Կարողանա՝*** թվարկել Հին Արևելքի երկրների նշանավոր տիրակալների անուններ ըստ ժամանակագրական հաջոր-դականության՝ նշելով մի քանի արքաների գահակալման տարեթվեր, ներկայացնել առանձին արքաների ներքին և արտաքին քաղաքականու-թյունը, բացատրել պետություն, դիցարան, տաճար, արհեստական ոռոգում, առևտուր, արհեստներ, բրոնզի դար, աշխարհիկ ու հոգևոր իշխանություն, բարեփոխում և այլ հասկացու-թյուններ:	***Կարողանա՝*** ներկայացնել և համեմատել Հին Արևելքի երկրների պետական կարգը, մշակույթը, տնտեսությունը, վերհանել ընդհանրություններն ու առանձնահատկությունները, գնահատել նշանավոր տիրակալների գործունեությունը:

ԲԱԺԻՆ 3. ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ		
Իմանա՝ Հունաստանի տեղը քարտեզի վրա, երկրի բնակլիմայական պայմանների, օլիմպիական խաղերի, հին հույն նշանավոր գործիչների, պոլիսների մասին: ***Կարողանա՝*** նշել Հին Հունաստանի պատմության շրջափուլերը, բնութագրել դրանք, թվարկել դրանց բնորոշ երևույթներ ու իրադարձություններ, թվարկել հունական պոլիսներ ու գաղութներ, պատմական կարևոր դեպքեր, փաստեր:	***Իմանա՝*** Ինչ է ազատագրական պատերազմը և նկարագրի հույն-պարսկական պատե-րազմը, հին հույների կրոնի, հունական աստվածների, առասպելների մասին, պոլիս, հելոտ, սպարտացի, օստրակոն, դեմոս, լակոնիկ ոճ հասկացությունների իմաստը: ***Կարողանա՝*** բացատրել Հին Հունաստանից մեզ հասած հասկացություններ (տիրանիա, օլիգարխիա, ստրատեգիա, ֆալանգա, դեմոկրատիա, սպարտական դաստիարակություն, ակադեմիա, ծերակույտ):	***Իմանա՝*** ինչ է բարեփոխումը, դրա նշա-նակությունը Հին Հունաստա-նում, հին հույն նշանավոր գոր-ծիչների, նրանց իրականացրած բարեփոխումների, Աթենքի և Սպարտայի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի, կառավարման կարգերի մասին: ***Կարողանա՝*** ներկայացնել Աթենքի և Սպարտայի քաղաքական, տնտեսական, մշակութային ընդհանրությունները և առանձնահատկությունները, հունական մշակույթի դերը համաշխարհային մշակույթի պատմության մեջ, բացատրել ժողովրդավարական կառավարում հասկացությունը և նշի տարբերություններ դրա և արևելյան բռնապետության միջև:

ԲԱԺԻՆ 4. ՀԵԼԼԵՆԻԶՄ		
Իմանա՝ Բալկանյան թերակղզու և Մակեդոնիայի, Ալեքսանդր Մակեդոնացու նվաճած երկրների, հելլենիստական պետությունների, հելլենիստական մշակույթի խոշոր կենտրոնների մասին: ***Կարողանա՝*** Քարտեզի վրա ցույց տալ Բալկանյան թերակղզին և Մակեդոնիան, Ալեքսանդր Մակեդոնացու նվաճած երկրներ, հելլենիստական պետությունները, նշանավոր ճակատամարտերի վայրեր:	***Իմանա՝*** մակեդոնական բանակի, Ալեքսանդրի արևելյան արշավանքի և մղած ճակատամարտերի, հելլենիզմ հասկացության, հելլենիզմի տարածմանը նպաստող պատմական հանգամանքների մասին: ***Կարողանա՝*** թվարկել Մակեդոնացու կյանքի և գործունեության կարևոր իրադարձությունները, բացատրել նվաճված ժողովուրդների հանդեպ Ալեքսանդրի վերաբերմունքի պատճառները, հելլենիզմ հասկացության իմաստը, արժևորել հելլենիստական մշակույթի ձեռքբերումները:	***Իմանա՝*** Մակեդոնիայի կողմից հունական պոլիսների հպատակեցման, Ալեքսանդրի հաղթական արշավանքների ու տերության կազմավորման մասին: ***Կարողանա՝*** բացատրել մակեդոնական փոքրաթիվ բանակների հաղթանակների, կայսրությունների, այդ թվում նաև Ալեքսանդրի տերության անկման պատճառները, բնութագրել Մակեդոնացուն և գնահատել նրա գործունեությունը, նրան համեմատել Հին աշխարհի նշանավոր այլ գործիչների հետ:
ԲԱԺԻՆ 5. ՀԻՆ ՀՌՈՄ		
Իմանա՝ Իտալիայի աշխարհագրական դիրքի, բնակլիմայական պայմանների, բնակիչների, Հռոմի հիմնադրման, Հին Հռոմի նշանավոր զորավարների և կայսրերի, հռոմեական դիցարանի ու մշակույթի, քրիստոնեության ծագման և վաղ քրիստոնեական համայնքների մասին: ***Կարողանա՝*** Քարտեզի վրա ցույց տալ Իտալիան, նրա նվաճած երկրներ, թվարկել և բնութագրել Հին	***Իմանա՝*** Հռոմեական պետության ձևավորման ու կայացման մասին, հռոմեական ընտանիքի դերի, հռոմեական հասարակության, Պունիկյան պատերազմների, Հին Հռոմի պետական կարգի ու բանակի, առաջին և երկրորդ եռապետությունների ստեղծման նպատակների տնտեսական, քաղաքական և ռազմական բարեփոխումների նշանակության մասին: ***Կարողանա՝*** բացատրել և մեկնաբանել Հին Հռոմից մեզ հասած հասկացությունների (հանրապետություն,	***Իմանա՝*** Հռոմեական հանրապետության, կայսրության պետական կառույցի առանձնահատկությունները, բանակի կառուցվածքն ու նշանակությունը, հռոմեական դիվանագիտության առանձնահատկությունները, Արևմտյան Հռոմեական կայսրության անկման պատճառները: ***Կարողանա՝*** հիմնավորել տնտեսական, քաղաքական և ռազմական բարեփոխումների նշանակությունը Հռոմի

Հռոմի նշանավոր զորավարների, կայսրերի, մշակութային գործիչների, հռոմեական աստվածների, կազմել Հին Հռոմի պատմության կարևորագույն իրադարձությունների ժամանակագրություն:	դիկտատոր, պրովինցիա, ապստամբություն, սև ցուցակ, միապետություն, պատրիկներ, պլեբեյներ, եռապետություն, գլադիա-տոր) և արտահայտություն-ների (Պյուռհոսյան հաղթա-նակ, Եկա, տեսա, հաղթեցի, Բաժանիր և տիրիր) իմաստը, ներկայացնել քրիստոնեու-թյան առաջացման պատմական պայմանները:	համար, համեմատել Հին Հռոմի նշանավոր պետական գործիչների, գնահատել նրանց գործունեությունը, Հռոմեական հանրապետությունից դեպի միապետություն անցումը, վերլուծել Հռոմի վարած ներքին ու արտաքին քաղաքականությունը, ներկայացնել Արևմտյան Հռոմեական կայսրության անկման պատճառները:

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ------ 7-**րդ դասարան**

ԲԱԺԻՆ 1. **ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐ**		
Ա մակարդակ	**Բ մակարդակ**	**Գ մակարդակ**
Իմանա՝ ժողովուրդների մեծ գաղթի մասին, բարբարոսական ցեղերի, Ֆրանկական պետության ստեղծման, Սրբազան Հռոմեական կայսրության առաջացման, վիկինգների արշավանքների, Կիևյան Ռուսիայի կազմավորման և մկրտության մասին:	***Իմանա՝*** Արևելահռոմեական կայսրության սահմանների և ազգային կազմի, քրիստոնեական եկեղեցու ձևավորման, Կառլոս Մեծի նվաճումների, վիկինգների դարաշրջանի մասին, վաղմիջնադարյան Եվրոպայում կատարված կարևորագույն իրադարձությունների, մշակութային կյանքի զարգացման ու ձեռքբերումների մասին:	***Իմանա՝*** Բյուզանդիայի հզորացման նախադրյալները Հուստինիանոս Ի-ի և Մակեդոնական (Հայկական) դինաստիայի օրոք, վաղմիջնադարյան Եվրոպայում կատարված կարևորագույն իրադարձությունների պատճառների ու հետևանքների մասին:
Կարողանա՝ Քարտեզի վրա ցույց տալ Արևելյան և Արևմտյան հռոմեական կայսրությունները, Ֆրանկական պետությունը, Հին Ռուսիան, թվարկել նշանավոր տիրակալների անուններ, կազմել կարևոր որոշ իրադարձությունների ժամանակագրություն:	***Կարողանա՝*** Քարտեզի վրա ցույց տալ բարբարոսական ցեղերի տեղաշարժը, գնահատել վաղմիջնադարյան Եվրոպայում կատարված կարևորագույն իրադարձությունները, բացատրել ժողովուրդների մեծ գաղթ, բարբարոսներ, կնյազ, վարյագ,	***Կարողանա՝*** վերլուծել վաղմիջնադարյան Եվրոպայի տարբեր երկրների հասարակական կյանքը, պետական կարգը, բանակը, մշակութային, տնտեսական զարգացմանը նպաստող պայմանները, համեմատել նշանավոր պետական գործիչներին, նրանց վարած քաղաքականությունը:

	ավատատիրություն հասկացությունները:	
ԲԱԺԻՆ 2. ՄԻՋՆԱԴԱՐԸ ԾԱՂԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ		
Իմանա՝ ավատատիրական հարաբերությունների ձևավորման, ավատատիրական աստիճանակարգության, գյուղական համայնքի, միջնադարյան քաղաքների, համքարությունների, խաչակրաց արշավանքների, միջնադարյան դպրոցների ու համալսարանների, նշանավոր գործիչների մասին: ***Կարողանա՝*** թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Արևելքում առաջացած խաչակրաց պետությունները, միջնադարյան նշանավոր համալսարանական քաղաքներ, նշել միջնադարի ծաղկման ժամանակաշրջանի մի քանի կարևոր իրադարձություններ: կազմել միջնադարի ծաղկման ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունների ժամանակագրություն:	*Իմանա՝* ավատատիրական հասարակարգի էության, միջնադարում գյուղացիների և ավատատերերի կենցաղի, քաղաքների առաջացման ու զարգացման նախադրյալների, խաչակրաց շարժման պատճառների ու հետևանքների, XIII դ. նշանավոր տիրակալների, միջնադարյան համալսարանների գործունեության, հերետիկոսների դեմ մղվող պայքարի մասին: ***Կարողանա՝*** բացատրել սենյոր, վասալ, համքարություն, ավատ, ասպետ, եռադաշտային համակարգ, դեկան, բանադրանք, խաչակիր, կաթոլիկ, ուղղափառ , ինկվիզիցիա, գիլդիա, յոթ ազատ արվեստներ, հոգևոր-ասպետական միաբանություն հասկացությունների իմաստը:	***Իմանա՝*** ավատատիրական հարաբերությունների ձևավորման ուղիների, ավատատիրական աստիճանակարգության, համքարությունների ունեցած դերի, Արևելքում առաջացած խաչակրաց պետությունների, կայսրերի և պապերի պայքարի պատճառների ու հետևանքների, համալսարանների խաղացած դերի մասին: ***Կարողանա՝*** բնութագրել և համեմատել ժամանակաշրջանի նշանավոր պետական, հոգևոր, մշակութային գործիչներին, վերլուծել խաչակրաց շարժման պատճառներն ու հետևանքները, քրիստոնեական եկեղեցու պառակտման պատճառները:
ԲԱԺԻՆ 3. ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՇՈՒՆԸ		
Իմանա՝ ավատատիրական հարաբերությունների քայքայման, ազգային պետությունների առաջացման, Հարյուրամյա պատերազմի, Բյուզանդական կայսրության կործանման, Ռուսական կենտրոնացված	***Իմանա՝*** ավատատիրական հարաբերությունների քայքայման պատճառների ու հետևանքների, ազգային պետությունների առաջացման նախադրյալների, թուրքական նվաճումների, Ռուսական կենտրոնացված	***Իմանա՝*** դասային միապետությունների առաջացման, Հարյուրամյա պատերազմի պատճառների և հետևանքների, Բյուզանդական կայսրության կործանման հետևանքների, Ռուսական

պետության կազմավորման մասին: ***Կարողանա՝*** ներկայացնել անգլիական և ֆրանսիական դասային միապետության կառուցվածքը, թվարկել ուշ միջնադարի կարևոր իրադարձություններ, քարտեզի վրա ցույց տալ Օսմանյան և Ռուսական պետությունների տարածքային նվաճումները:	պետության կազմավորման գործում Մոսկվայի ունեցած դերի և Ռուսական պետությունության նվաճումների մասին: ***Կարողանա՝*** ներկայացնել ազգային պետությունների կազմավորմանը նպաստող և խոչընդոտող պայմանները, պարզաբանել Հարյուրամյա պատերազմի պատճառներն ու հետևանքները, բացատրել մանուֆակտուրա, դասային միապետություն, պառլամենտ, գլխավոր շտատներ, ռայխստագ, կորտես, երկրային ժողով, պրիկազ, օպրիչնինա հասկացությունները:	կենտրոնացված պետության կազմավորման նախադրյալների և ընթացքի մասին: ***Կարողանա՝*** վերլուծել ավատատիրության և եկեղեցու ճգնաժամի պատճառները, համեմատել անգլիական և ֆրանսիական դասային միապետության կառուցվածքը, համեմատել Ջոն Ուիկլիֆին և Յան Հուսին, գնահատել ազգային հերետիկոսությունների դերը, բնութագրել և Իվան IV-ին, գնահատել նրա գործունեությունը:
ԲԱԺԻՆ 4. ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ		
Իմանա՝ Արաբական խալիֆայության կազմավորման ժամանակը և առաջին խալիֆների անունները, Արևելքի նշանավոր քաղաքներ, կառույցներ, ստեղծագործություններ, Չինաստանում միջին դարերում կատարված գյուտերը, Արևելքում տարածված կրոնական ուղղությունները (իսլամ, հինդուիզմ, բուդդայականություն): ***Կարողանա՝*** Քարտեզի վրա ցույց տալ Արաբական խալիֆայությունը, Մոնղոլական տերությունը, Օսմանյան կայսրությունը, Հնդկաստանը, Չինաստանը, Ճապոնիան, թվարկել միջնադարում Արևելքի երկրներում տեղի ունեցած մի քանի կարևոր իրադարձություններ,	***Իմանա՝*** իսլամի միավորիչ դերը արաբական աշխարհում, Արաբական խալիֆայության, Մոնղոլական տերության, Օսմանյան կայսրության, Դելիի սուլթանության, Մեծ Մողոլի կայսրության, Տան, Մին կայսրությունների, □Տայկա□ և սյոգունների դարաշրջանների, Արևելքի երկրների մշակութային կարևոր ձեռքբերումների մասին: ***Կարողանա՝*** ներկայացնել Արևելքի երկրների ազգային մշակույթները, Արևելքի ժողովուրդների պայքարը թյուրք-մոնղոլական նվաճողների դեմ, Արևելք-Արևմուտք առևտրատնտեսական և մշակութային կապերը,	***Իմանա՝*** Արևելքի երկրներում պետական կազմավորումների առաջացման ժամանակը, նախադրյալները, կարևոր իրադարձություններն ու երևույթները, Արաբական խալիֆայության տրոհման պատճառները, Արևելքի երկրների տնտեսական, ռազմական, քաղաքական հզորության նախադրյալները և անկման պատճառները: ***Կարողանա՝*** համեմատել Արևելքի երկրներում պետական կազմավորումների առաջացման ժամանակը, նախադրյալները, կարևոր իրադարձություններն ու երևույթները, Արևելքի երկրների տնտեսական, ռազմական, քաղաքական հզորության

նշանավոր պետական ու մշակութային գործիչների անուններ:	բացատրել Ղուրան, իսլամ, մուսուլման, խալիֆ, հիջրա, շիա, սուննի, ռեկոնկիստա, ընտրություն ըստ արժանիքի, սինտո, սյոգուն, կաբուկի, պագոդա, սամուրայ հասկացությունների իմաստը:	նախադրյալները և քայքայման ու անկման պատճառները, բացատրել, հասկացությունների իմաստը:
ԲԱԺԻՆ 5. ՆՈՐ ԵՎՐՈՊԱՅԻ ԾՆՈՒՆԴԸ		
Իմանա՝ ծովային և ցամաքային նշանավոր հայտնագործություններ կատարողների, XVI-XVII դդ. նշանավոր գիտնականների և քաղաքա-կան գործիչների անուններ: ***Կարողանա՝*** թվարկել Վերածննդի դարա-շրջանի նշանավոր գործիչների և նրանց գործերը (դա Վինչի, Ռաֆայել, Միքելանջելո, Դանթե), քարտեզի վրա ցույց տա Աշխարհագրական մեծ հայտնագործություններ և դրանք իրականացրած գործիչների երթուղին:	***Իմանա՝*** Աշխարհագրական մեծ հայտնագործությունների և դրանց հետևանքների, Ռեֆորմացիայի սկզբնավորման, տարածման և հետևանքների մասին: ***Կարողանա՝*** ներկայացնել ուշ միջնա-դարում գիտության մեջ կատարված նոր գյուտերը ու դրանց նշանակությունը, գնահատել Վերածննդի մշակույթը, աշխարհագրական հայտ-նագործությունները ներկայացնել ժամանակագրական հաջորդականությամբ, բացատրել Վերածնունդ, հումանիստներ, Հյուսիսային Վերածնունդ, ինդուլգենցիա, բողոքականներ, Ռեֆորմացիա, Հակառեֆոր-մացիա, գաղութ, կոնկիստա-դոր, լյութերական եկեղեցի, անգլիկան եկեղեցի, գիտական հեղափոխություն հասկացությունների իմաստը:	***Իմանա՝*** Երեսնամյա պատերազմի պատճառների ու հետևանքների, նոր Եվրոպայի ձևավորման նախադրյալների մասին: ***Կարողանա՝*** բացատրել Աշխարհագրական մեծ հայտնագործությունների նշանակությունը, գիտական հեղաշրջումների հետևանքները, դրանց նկատմամբ եկեղեցու դիրքորոշումը, գնահատել Նիդեռլանդական հեղափոխության պատմական նշանակությունը, Նոր Եվրոպայի ձևավորման պայմանները, հասկացությունների իմաստը:

ՆՈՐ ԴԱՐԵՐ ---- 8-րդ դասարան

ԲԱԺԻՆ 1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՓՈՒԼԸ		
Ա մակարդակ	**Բ մակարդակ**	**Գ մակարդակ**
Իմանա՝ արդյունաբերական հասարակության ձևավորման և արդյունաբերական հասարակության առաջին շրջափուլում տեղի ունեցած կարևոր տեղաշարժերի, հեղափոխությունների, վերափոխումների, միջազգային հարաբերությունների, մշակութային կյանքի զարգացման ու մշակութային կարևոր ձեռքբերումների մասին:	***Իմանա՝*** արդյունաբերական հասարակության առաջին շրջափուլում տեղի ունեցած կարևոր տեղաշարժերի, հեղափոխությունների, վերափոխումների պատճառների, ընթացքի ու հետևանքների, Արևելքի երկրներում կապիտալիստական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտող պայմանների, ԱՄՆ-ի կազմավորման, Օսմանյան կայսրության մեջ իրականացված բարեփոխումների փորձերի և դրանց արդյունքների, նապոլեոնյան դարաշրջանի, գաղութային համակարգի ձևավորման մասին:	***Իմանա՝*** արդյունաբերական հասարակության առաջին շրջափուլում զարգացման արդյունքների, լուսավորական շարժման ու լուսավորյալ միապետների, անգլիական ու ֆրանսիական հեղափոխությունների արդյունքների, Արևելքի ավանդական հասարակությունների, միջազգային հարաբերությունների բնույթի, մշակույթի տարբեր ճյուղերում արձանագրված նվաճումների մասին:
Կարողանա՝ թվարկել անգլիական և ֆրանսիական հեղափոխության նշանավոր գործիչների, արդյունաբերական հասարակության առաջին շրջափուլի պետական, քաղաքական և մշակութային նշանավոր գործիչների, Քարտեզի վրա ցույց տա Եվրոպական խոշոր երկրները, ԱՄՆ-ը և Արևելքի երկրները, բացատրել □Պետությունը ես եմ□, □Մեզանից հետո թեկուզ ջրհեղեղ□ արտահայտությունների իմաստը:	***Կարողանա՝*** պարզաբանել արդյունաբերական հասարակության առաջին շրջափուլում տեղի ունեցած կարևոր տեղաշարժերի, հեղափոխությունների, վերափոխումների պատմական անհրաժեշտությունը, Արևելքի երկրներում կապիտալիստական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտող պայմանները, ներկայացնել դիրեկտորիան, կոնսուլությունը, կայսրությունը Ֆրանսիայում, բնութագրել դարաշրջանի նշանավոր գործիչների, բացատրել բուրժուազիա, պրոլետարիատ,	***Կարողանա՝*** վերլուծել եվրոպական և արևելյան պետությունների անհավասարաչափ զարգացման պատճառները, մեկնաբանել և համեմատել տարբեր երկրներում կատարված հեղափոխությունների և բարեփոխումների պատճառներն ու արդյունքները, վերլուծել Նապոլեոնյան պատերազմների, գաղութային քաղաքականության պատճառները և հետևանքները, համեմատել դարաշրջանի պետական նշանավոր

	ընդդիմություն, կապիտալ, սահմանադրություն, չարտիզմ, հանրագիտարան, մանուֆակտուրա, քաղաքացիական պատերազմ, թանզիմաթ հասկացությունների իմաստը:	գործիչների վարած քաղաքականությունը:
ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ		
Իմանա՝ դարաշրջանի նշանավոր գործիչների (Նապոլեոնի, Բիսմարկի, Գարիբալդիի), Առաջին աշխարհամարտում ներգրավված երկրների, Առաջին աշխարհամարտի առավել խոշոր ճակատամարտերի, Առաջին աշխարհամարտի ընթացքում ռազմական տեխնիկայի նորամուծությունների:	***Իմանա՝*** զարգացած արդյունաբերական երկրների, տնտեսության, գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներում տեղի ունեցած կարևոր փոփոխությունների, հեղափոխական ու ազատական շարժումների, Եվրոպայում առաջացած նոր պետությունների, արևելյան հասարակությունների արդիականացման փորձերի, գաղութային քաղաքականության, միջազգային հարաբերությունների, Առաջին աշխարհամարտի, մշակութային կյանքում կատարված փոփոխությունների մասին:	***Իմանա՝*** աշխարհի անհամաչափ զարգացման պատճառները, հեղափոխական և ազատական շարժումների, արևելյան հասարակությունների արդիականացման փորձերի, գաղութային քաղաքականության հետևանքները, միջազգային հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունների պատճառներն ու գլխավոր արդյունքները, Առաջին աշխարհամարտի պատճառները, ընթացքն ու հետևանքները, մշակույթի տարբեր ոլորտներում արձանագրված նվաճումները:
Կարողանա՝ բնութագրել դարաշրջանի նշանավոր պետական ու մշակութային նշանավոր գործիչների, քարտեզի վրա ցույց տալ Առաջին աշխարհամարտում ներգրավված մեծ տերությունները, Առաջին աշխարհամարտի առավել խոշոր ճակատամարտերը, թվարկել մի քանի կարևոր իրադարձություններ, մշակութային գործիչներ ու նրանց ստեղծագործություններ, գյուտեր, կազմել համաշխարհային	***Կարողանա՝*** ներկայացնել հեղափոխական և ազատական շարժումների, Գերմանիայի և Իտալիայի միավորման պատմական անհրաժեշտությունը, գաղութացման, միջազգային հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունների և Առաջին աշխարհամարտի պատճառները, մշակույթի տարբեր բնագավառներում արձանագրված նվաճումները, պարզաբանել ազգային հիմնախնդիրների լուծման ուղիները,	***Կարողանա՝*** գնահատել տնտեսական զարգացման գլխավոր արդյունքները, հեղափոխական և ազատական շարժումների, արևելյան հասարակությունների արդիականացման փորձերի, գաղութային քաղաքականության հետևանքները, համեմատել միջազգային հարաբերություններում տեղի ունեցած փոփոխությունների պատճառներն ու գլխավոր

կարևոր նշանակություն ունեցող իրադարձությունների ժամանակագրություն:	արևելյան հասարակություն-ների արդիականացման անհրաժեշտությունը, վերլուծել մեծ տերությունների վարած քաղաքականությունը, բացատրել բանկ, ֆերմեր, ռասա, մոնոպոլիա, սոցիալիզմ, կապիտալի արտահանում, բոլշևիկ, դեկրետ, կապիտուլյացիա, Անտանտ, նարոդնիկ, գաղութ, գենոցիդ հասկացությունների, Աշխարհի արհեստանոց, Երկաթով և արյունով, Տեղ արևի տակ արտահայտությունների իմաստը, քարտեզի օգտագործմամբ ներկայացնել ժամանակա-շրջանի կարևոր պատմական իրադարձությունները, ռազմական գործողությունների ընթացքը:	արդյունքները, ընթացքն ու հետևանքները, վերլուծել եվրոպական քաղաքական զարգացումների միտումները, գաղութային նվաճումների արդյունքները, պատերազմի պատրաստվող երկրների իմպերիալիստական գաղափարախոսությունը, քննարկել Առաջին աշխարհամարտի ռազմաքաղաքական արդյունքները, հիմնավորել սեփական տեսակետները, բնութագրել և համեմատել Գարիբալդիի և Բիսմարկի դերը իրենց երկրների միավորման գործում:

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ----- 9-**րդ դասարան**

ԲԱԺԻՆ 1. ԱՇԽԱՐՀԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՓՈՒԼՈՒՄ		
Ա մակարդակ	**Բ մակարդակ**	**Գ մակարդակ**
Իմանա՝ Վերսալյան պայմանագիրը ստորագրած երկրների, այդ դարաշրջանի նշանավոր ռազմաքաղաքական և մշակութային գործիչների, Երկրորդ աշխարհամարտի մասնակից պետությունների և կարևոր ճակատամարտերի, Երկրորդ աշխարհամարտի հիմնական փուլերի, ռազմաքաղաքական գործիչների մասին:	***Իմանա՝*** Փարիզի վեհաժողովի, ստորագրված պայմանագրերի, Վերսալ-վաշինգտոնյան համակարգի, ժողովրդավարական ու ավանդական հասարակությունների, տնտեսական մեծ ճգնաժամի, 1920-1930-ական թթ. մշակույթի տարբեր բնագավառներում կատարված նվաճումների մասին, 1920 - 1930-ական թթ. միջազգային հարաբերությունների առանձնահատկությունների, Երկրորդ աշխարհամարտի պատճառների, ընթացքի ու արդյունքների մասին:	***Իմանա՝*** Վերսալ-վաշինգտոնյան պայմանագրերի, ժողովրդավարական ու ավանդական հասարակությունների առանձնահատկությունների, տնտեսական մեծ ճգնաժամի հաղթահարման ուղիների, 1920-1930-ական թթ. մշակույթի տարբեր բնագավառներում կատարված նվաճումների, Երկրորդ աշխարհամարտի ռազմաքաղաքական արդյունքները:
Կարողանա՝ թվարկել և քարտեզի վրա ցույց տալ Վերսալյան պայմանագիրը ստորագրած երկրներ, Երկրորդ աշխարհամարտի մասնակից մեծ պետություններ և կարևոր ճակատամարտեր, բնութագրել այդ դարաշրջանի նշանավոր ռազմաքաղաքական և մշակութային գործիչների, ժամանակագրական հաջորդականությամբ թվարկել համաշխարհային կարևոր նշանակություն ունեցող իրադարձություններ:	***Կարողանա՝*** ներկայացնել և վերլուծել հաշտության պայմանագրերի բովանդակությունը, պարզաբանի Ազգերի լիգայի ստեղծման նպատակը, գործառույթները, ֆաշիզմի էությունը և դրա ի հայտ գալուն նպաստող պայմանները, տնտեսական ճգնաժամի հետևանքները, քեմալական շարժման էությունը, ներկայացնել Երկրորդ համաշխարհային պատերազմի ռազմաքաղաքական արդյունքները,	***Կարողանա՝*** քննարկել Երկրորդ աշխարհամարտի պատճառները և հետևանքները, բացատրել և հիմնավորել Գերմանիայի սկզբնական հաջողությունների պատճառները, ԽՍՀՄ-ի տարած հաղթանակի նախադրյալները և նշանակությունը, պարզաբանել 1920 - 1930-ական թթ. միջազգային հարաբերությունների գլխավոր հիմնահարցերը, նորագույն շրջանում Արևելքի երկրների քաղաքական զարգացման

	բացատրել ագրեսիա, ինտերվենցիա, ստատուս-քվո, Նոր կուրս, կուլակ, ռևանշ հասկացությունների և Տարօրինակ պատերազմ, Կայծակնային պատերազմ, Երկրորդ ճակատ արտահայտությունների իմաստը:	առանձնահատկությունները, համեմատել համաշխարհային երկու պատերազմների պատճառները, հակամարտող ուժերի կազմն ու ծրագրերը:
ԲԱԺԻՆ 2. ԱՇԽԱՐՀԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ		
Իմանա՝ 1945-1991 թթ. միջազգային հարաբերությունների, գաղութային համակարգի փլուզման մասին, ՄԱԿ-ի ստեղծման, ԽՍՀՄ ղեկավարների, հետպատերազմյան ժամանակաշրջանի նշանավոր ռազմա-քաղաքական գործիչների մասին: ***Կարողանա՝*** թվարկել և բնութագրել նշանավոր ռազմա-քաղաքական գործիչների, ժամանակագրական հաջորդականությամբ ներկայացնել համաշխարհային կարևոր նշանակություն ունեցող իրադարձություններ, քարտեզի վրա ցույց տալ աշխարհի խոշոր տերությունները:	***Իմանա՝*** նոր միջազգային համակարգի ձևավորման, երկբևեռ աշխարհի ձևավորման, տնտեսական մրցակցության պատճառներն ու հետևանքները, ՄԱԿ-ի ստեղծման նպատակը, խնդիրները, գործառույթները, միջազգային հարաբերություններում դրսևորված փոփոխությունները, տարածաշրջանային պատերազմների ու հակամարտությունների մասին: ***Կարողանա՝*** ներկայացնել ՄԱԿ-ի ստեղծման անհրաժեշտությունը, նպատակը, խնդիրները, գործառույթները, ՆԱՏՕ-ի և Վարշավյան դաշինքի ստեղծման պատճառները և դրանց գործունեությունը, Անհատի պաշտամունքի դատապարտման պատմական նշանակությունը, Վերակառուցման քաղաքականությունը, բացատրել Ձնհալ, Լճացում, Վերակառուցում, համադաշնություն, ՆԱՏՕ, ԱՊՀ, օկուպացիա, Մարշալի պլան հասկացությունների և արտահայտությունների իմաստը:	***Իմանա՝*** նոր միջազգային-իրավական համակարգի ձևավորման, երկբևեռ աշխարհի ձևավորման, տնտեսական մրցակցության, աշխարհի երկրների զարգացման առանձնահատկությունների, գաղութային համակարգի փլուզման պատճառների, երրորդ աշխարհի ձևավորման, Արևելքի երկրների զարգացման առանձնահատկությունների մասին: ***Կարողանա՝*** վերլուծել սառը պատերազմի պատճառները և դրա դրսևորման ձևերը, համեմատել աշխարհի զարգացած երկրները, երրորդ աշխարհի, Արևելքի երկրների տնտեսությունն ու քաղաքականությունը, վեր հանել Ձնհալի տարիների և Լճացման շրջանի ԽՍՀՄ-ի ներքին և արտաքին քաղաքականության բնորոշ գծերը, հիմնավորել, թե արդյոք անխուսափելի՞ էր ԽՍՀՄ-ի փլուզումը, քննարկել և մեկնաբանել, թե ինչու ԱՄՆ-ը դարձավ միակ գերտերությունը:

ԲԱԺԻՆ 3. ԱՇԽԱՐՀԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ		
Իմանա՝ Սառը պատերազմի ավարտից հետո աշխարհի խոշոր պետությունների զարգացման, միջազգային հարաբերություններում նկատված փոփոխությունների, արդի համաշխարհային հիմնախնդիրների, համաշխարհային մշակույթի կարևորագույն նվաճումների մասին,	***Իմանա՝*** Արևմուտքի, հետխորհրդային երկրների զարգացման առանձնահատկությունների, արդի դարաշրջանի միջազգային հակամարտությունների, համաշխարհայնացման, մշակույթի տարբեր ոլորտներում արձանագրված նվաճումների արդյունքների մասին:	***Իմանա՝*** արդի աշխարհաքաղաքական փոփոխությունների պատճառների ու հետևանքների, նոր աշխարհակարգի, համամոլորակային ու հումանիտար հիմնախնդիրների, միջազգային համագործակցության ու խաղաղության անհրաժեշտության մասին:
Կարողանա՝ թվարկել և քարտեզի վրա ցույց տալ ԱՄՆ-ը, եվրոպական, Արևելքի խոշոր երկրները, ԱՊՀ-ի երկրները և դրանց մայրաքաղաքները, բնութագրել նշված ժամանակաշրջանի պետական և մշակութային նշանավոր գործիչների:	***Կարողանա՝*** ներկայացնել աշխարհի տարբեր երկրների տնտեսական զարգացման առանձնահատկությունները, արդի դարաշրջանի միջազգային հարաբերությունների միտումները, հակամարտությունների պատճառներն ու հետևանքները, համաշխարհայնացման դրական ու բացասական արդյունքները, բացատրել ազատականացում, ինտեգրում, գլոբալիզացիա, կոոպերացիա, մետրոպոլիա, անեքսիա, Բեռլինյան պատ, Երկաթյա լեդի բառերի և արտահայտությունների իմաստը:	***Կարողանա՝*** գնահատել և համեմատել աշխարհի տարբեր երկրների տնտեսական ու արտաքին քաղաքականությունները, համեմատել նշանավոր պետական գործիչների գործունեությունը, քննարկել և տեսակետներ հայտնել համաշխարհային նշանակություն ունեցող հիմնախնդիրների վերաբերյալ, նշել և հիմնավորել մի քանի համամարդկային կարևոր հիմնախնդիրների լուծման սեփական վարկածներ, վեր հանել ներկայիս Չինաստանի զարգացման յուրահատկությունները, արաբական աշխարհի հիմնախնդիրները և վերջին զարգացումները:

ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

<<Համաշխարհային պատմություն>> առարկայի դասավանդման արդյունքում սովորողը պետք է.

- Գնահատի մարդկության ստեղծած քաղաքակրթական արժեքները, իրեն համարի այդ ամենի օրինական ժառանգորդը, պահպանողն ու հաջորդ սերնդին փոխանցման պատասխանատու:
- Հարգալից վերաբերմունք ունենա այդ արժեքները ստեղծած սերունդների, նրանց նշանավոր ու անհայտ ներկայացուցիչների նկատմամբ:
- Հպարտություն զգացում ունենա սեփական ժողովրդի, նրա բազմահազարամյա պատմության ընթացքում ունեցած թռիչքների ու մշակութային ձեռքբերումների նկատմամբ:
- Հարգալից վերաբերմունք ունենա աշխարհի այլ տարածաշրջաններում ու մայրցամաքներում ապրող տարբեր ռասսաների և կրոնական ուղղությունների պատկանող ժողովուրդների ու էթնիկական խմբերի, նրանց ապրելակերպի, ավանդույթների ու մշակույթի այլ կողմերի նկատմամբ:
- Գիտակցի, որ առանց անցյալի մարդկանց ամենօրյա աշխատանքի և փորձության, կուտակած գիտելիքների ու հմտությունների անհնարին կլիներ ժամանակակից քաղաքակրթությունն ընդհանրապես:
- Գիտակցի պետության և ազգային-հոգևոր կառույցների կարևորությունն ազգային մշակույթի պահպանման ու ազգային պետության զարգացման գործում:
- Կարևորի անձնական, հասարակական և ազգային շահերի միասնությունը և ներդաշնակությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ: Երևան, 2011:
2. Գիլգամեշ, թարգմ. Ն. Մարտիրոսյանի, Եր. 1963:
3. Հերոդոտոս, Պատմություն, Եր., 1986:
4. Քսենոփոն, Անաբասիս, Եր., 1970:
5. Հոմերոս, Իլիական, Եր., 1955, 1987:
6. Հոմերոս, Ոդիսական, Եր., 1957, 1988:
7. Նեյհարդ, Ա. Շիշովա Ի., Հին աշխարհի յոթ հրաշալիքները, Եր., 1989 (կամ ցանկ. այլ հրատ.):
8. Առաքելյան Ա., Հունական գրականության պատմություն, Եր. 1962:
9. Առաքելյան Ա., Հռոմեական գրականության պատմություն, Եր., 1975:
10. Դիցաբանական բառարան, Եր., 1985:
11. Ստինգլ Մ., Հնդկացիական բուրգերի առեղծվածները, Եր., 1977:
12. Ուտչենկո Ս., Հուլիոս Կեսար, Եր., 1980:
13. Ցվայգ Ս., Մարդկության աստեղային ժամերը: Պատմական մանրապատումներ, Եր., 1974:
14. Ցվայգ Ս., Մագելանի սխրագործությունը, Եր., 1989:
15. Շտեկլի Ա., Գալիլեյ, Եր., 1984:
16. Լևանդովսկի Ա., Ժաննա դ'Արկ, Եր., 1985:
17. Լավրեցկի Ի., Սիմոն Բոլիվար, Եր., 1975:
18. Գրիգորև Ս., Ալեքսանդր Սուվորով, Եր., 1985:
19. Մանֆրեդ Ա., Երեք դիմանկար Ֆրանսիական մեծ հեղափոխության դարաշրջանի, Եր., 1988:
20. Մանֆրեդ Ա., Նապոլեոն Բոնապարտ, Եր., 1975:
21. Տալանով Ա., Նանսեն, Եր., 1962:
22. Բորիսով Յու., Շառլ Մորիս Թալեյրան, Եր., 1989:
23. Գոլովանով Յ., Էտյուդներ գիտնականների մասին, Եր., 1984:
24. Խաչատրյան Ի., ԱՄՆ-ի Սահմանադրությունը., Եր., 1991:
25. Վոլկով Ֆ., Ուայթհոլի և Դաունինգ-սթրիթի գաղտնիքները, Եր., 1983:
26. Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Եր., 1984:
27. Իրանը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և պատերազմի տարիներին (ուսումնական առաջադրանքներ և մեթոդական օժանդակ նյութեր), կազմեց Վ. Բայբուրդյանը, Եր., 1984:
28. Մոլչանով Ն., Գեներալ դը Գոլ, Եր., 1976:
29. Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար, Եր., 2004:
30. Պատմություն և կրթություն, գիտատնտեսական և մեթոդական հանդես, <<Տաթև գիտակրթական համալիր>>, N 1-2, N 3-4, Եր., 2006:
31. История: Большой справочник для школьников и поступающих в вузы, Амбаров В.Н., Андреев П., Антоненко С.Т. и др., М., Дрофа, 2000.
32. История древнего мира и средних веков. 5-6 кл.: Дидактические материалы, Сухов В.В. и др., М. Дрофа, 2000.
33. История древнего мира, учеб. для VI кл. ср. учеб. заведный, Вигасин А.А., Самозванцева Н.В., М., МИРОС, 1995.

34. История средних веков, учебник для VII кл. средих учеб. заведный, Бойцов М., Шукуров Р., М., МИРОС, 1995.
35. Новая история, 1500-1800: Учебник для 7 кл. общеобразоват. учереждений Юдовская А.Я., Баранов П.А., Ванюшкина Л.М., М., Просвещение, 2000.
36. История мировых цивилизаций с древнейших времен до конца XX века. 10-11 кл.: Пособие для общеобразов. учеб. заведений, Хачатурян М.В., под ред. В.И. Уколовой, М., Дрофа, 2000.
37. История древнего мира, в трех томах, под редакцией И.М. Дьяконова, Москва, 1989.
38. История древней Греции. Под редакцией В.И. Авдиева, Москва, 1972.
39. История древнего Рима. Под редакцией А.Г. Бонщанина, Москва, 1956.
40. Великие пилководцы и их битвы. А.В. Венков, С.В. Деркач, Ростов-на-Дону, 1999.
41. Александр Великий в легендах и исследованиях Востока и Запада, Москва, 2000.
42. А. Тойнби, Цивилизация перед судом истории, Санкт-Петербург, 1995.
43. История религий. Учебное пособие, Москва, 2000.
44. Хроника человечества: Большая энциклопедия, составитель Б. Харенберг, Москва, 1996.
45. Иллюстрированная история мира, Москва, т. I-III, 1998.
46. Малая история искусства:Первобытное искусство, Москва, 1982.
47. Малая история искусства: Искусство Древнего Востока", М., 1976.
48. Малая история искусства: Античное искусство", М., 1972.
49. О.Р. Герни, Хетты, М., 1987.
50. В.А. Истрин, Развитие письма, М., 1961.
51. П. Монтэ, Египет Рамсесов, М., 1989.
52. А. Оппенхейм, Древнаяя Месопотамия, М., 1990.
53. Э.Н. Темкин, В.Г. Эрман, Мифы древней Индии, М., 1982.
54. Хрестоматия по истории древнего мира (под ред. В.Боруховича), Саратов, 1973.
55. Юань Кэ, Мифы древнего Китая, М., 1987.
56. Всемирная история новейшего времени. Справочное пособие, Минск, 1998.
57. Мир в XX веке. Дополнительные материалы к учебникам по новейшей истории, М., 1999.
58. Сафрастян Р.А., Доктрина османизма в политической жизни Османской империи, Ер., 1985.
59. История дипломатии, второе издание, т. 1-5, М., 1975-1979.
60. История международных отношений и внешней политики СССР, т. 1-3, 1967.
61. A concise history of the world, G.M. Roberts, New-York, Oxford university press. 1995.

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ
<<ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ>>
ԱՌԱՐԿԱՅԻ ԾՐԱԳԻՐ
(6-9-**րդ դասարաններ**)

Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր

<<Համաշխարհային պատմություն>> առարկայի հանրակրթական հիմնական դպրոցի VI-IX դասարանների ծրագիրը կազմվել է՝ հիմք ընդունելով ՀՀ Կրթության մասին օրենքը, ՀՀ Հանրակրթության մասին օրենքը, Հանրակրթության պետական չափորոշչի ու <<Համաշխարհային պատմություն>> առարկայի հիմնական դպրոցի չափորոշչի հայեցակարգային դրույթները, սկզբունքները և պահանջները:

Հանրակրթական դպրոցի VI-IX դասարաններում առարկան բովանդակային առումով ներակայացնում է հնագույն ժամանակներից մինչև մեր օրերն ընդգրկող համաշխարհային պատմության համակարգված և հանրամատչելի շարադրանքը: Առարկայի ուսումնական գլխավոր նպատակն է ձևավորել հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված, ազգային ու համամարդկային արժեքներ կրող ազատ, գիտակից անհատ և քաղաքացի: Ուսումնադաստիարակչական այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է, որպեսզի սովորողները ծանոթանան մարդկության անցյալին ու ստեղծած արժեքներին՝ տարբեր ժամանակաշրջանների, պատմական գործընթացների, տարածաշրջանների և պետությունների պատմության օրինակով:

Առարկայի գլխավոր խնդիրներն են՝ սովորողների մոտ ձևավորել պատմական կարևոր իրադարձությունները, երևույթները և պատմական զարգացման տրամաբանությունը հասկանալու, վերլուծելու, ինքնուրույն եզրահանգումներ անելու և պատմության դերը արժևորելու կարողություններ ու հմտություններ, նպաստել իր հայրենիքի նկատմամբ հպարտության ամրապնդմանը և ազգային ու համամարդկային մշակույթի ժառանգորդ լինելու գիտակցմանը:

Պատմական գիտելիքների անհրաժեշտ պաշարը և պատմական ուսումնասիրության միջոցով ձեռք բերվող ճանաչողական, տրամաբանական և աշխարհայացքային կարողություններն ու հմտությունները հնարավորություն կտան սովորողներին ավելի լավ ըմբռնել Հայաստանի և հայ ժողովրդի տեղն ու դերը քաղաքակրթության համընդհանուր պատմության մեջ:

Համաշխարհային պատմության ուսումնական նյութը VI-IX դասարաններում բաշխվել է հետևյալ կերպ.

VI դասարան - Հին աշխարհի պատմություն. ընդգրկում է մարդկության պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր թվարկության V դարի վերջը,

VII դասարան - Միջին դարերի պատմություն. ընդգրկում է V դարի վերջից մինչև XVII դարի սկզբներն ընկած ժամանակաշրջանը,

VIII դասարան - Նոր պատմություն. ընդգրկում է XVII դարի կեսերից մինչև 1918 թվականի վերջերն ընկած ժամանակաշրջանը:

IX դասարան - Նորագույն պատմություն. ընդգրկում է 1918 թվականի վերջերից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանը:

Առարկային յուրաքանչյուր ուսումնական տարվա համար հատկացվում է 34 դասաժամ, ընդամենը՝ 136 ժամ: Ընդ որում՝ կրկնության և ամփոփման ժամերը բաժինների ուսումնասիրմանը հատկացված ժամաքանակի մեջ չեն մտնում:

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(VI **դասարան**, **շաբաթական** 1 **ժամ**, **տարեկան** 34 **ժամ**)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 **ԺԱՄ**)

Համաշխարհային պատմության ուսումնասիրության առարկան, պարբերացումը և բովանդակությունը:

ԲԱԺԻՆ 1. **ՆԱԽՆԱԴԱՐ** (3 **ԺԱՄ**)

Հին քարի դար: Հնագույն մարդիկ: Նախնադարյան մարդկանց զբաղմունքները: Տոհմական համայնք:

Անցում նստակեցության: Միջին և նոր քարի դարեր: Անցում արտադրող տնտեսության: Հասարակական կյանքի կազմակերպման ձևերը: Կրոնական պատկերացումները, հավատալիքները:

Նախնադարյան հասարակության անկումը: Ցեղային միություններ: Հասարակության շերտավորումը, պետության առաջացումը:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 2. **ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔ** (9 **ԺԱՄ**)

Հին Արևելք: Քաղաքակրթական հիմնական կենտրոնները:

Հին Եգիպտոս. Նեղոսի պարգևը: Եգիպտական աշխարհակալ պետությունը:

Շումերական քաղաք–պետությունները: Աքքադի աշխարհակալ պետությունը: Բաբելոնի թագավորությունը. Համմուրապի: Նոր Ասորեստանի բարձրացումը. Սարգոն II: Նոր Բաբելոնի տերությունը:

Խեթական պետությունը: Խեթերը և հայկական պետությունները: Միտաննի: Փյունիկիա. փյունիկյան գաղութացումը, մշակույթը:

Հնդկաստանը Ք. ա. II հազարամյակում. արիացիների ներգաղթը: Հին Չինաստանի պետությունները:

Իրան: Իրանի ժողովուրդները: Կայսրության կազմավորումը. Կյուրոս Մեծ: Դարեհ I-ը և նրա բարեփոխումները: Աքեմենյան տերության անկումը, Հինարևելյան դարաշրջանի ավարտը:

Հին Արևելքի մշակութային նվաճումները: Կրոնը. բազմաստվածություն, դիցարանների կազմավորումը: Կրոնը մարդկանց կյանքում: Աշխարհաստեղծման առասպելը:

Գրի առաջացումը: Գաղափարագիր: Սեպագիր: Գրական (գեղարվեստական) ստեղծագործություններ:

Ճարտարապետություն: Քանդակագործություն:

Գիտական իմացության առաջացման նախադրյալները: Մաթեմատիկա, քիմիա, աստղագիտություն, բժշկություն: Հին Արևելքի գիտական արժեքների նշանակությունը:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 3. **ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ** (5 **ԺԱՄ**)

Պատմության արշալույսը: Երկիրը և ազգաբնակչությունը: Կրետե-միկենյան դարաշրջանը: Հոմերոսյան դարաշրջանը:

Պոլիսային կարգը: Վաղ տիրանիան. անցում ազնվապետությունից ժողովրդավարության: Հունական մեծ գաղութացումը: Հին Սպարտան. հասարակական կարգը, պետական կառավարումը: Աթենքը Ք.ա. VII-VI դարերում (Սոլոն, Պիսիստրատ, Կլիսթենես):

Հույն-պարսկական պատերազմները: Պերիկլեսյան դարաշրջանի Աթենքը: Պոլիսային կյանքի անկումը:

Դասական դարաշրջանի մշակույթը: Կրոնը: Կրթությունը: Գրականությունը և թատրոնը: Արվեստը: Մարմնակրթությունը (սպորտ):

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 4. **ՀԵԼԼԵՆԻԶՄ** (2 **ԺԱՄ**)

Ալեքսանդր Մակեդոնացի: Մակեդոնիայի բարձրացումը: Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը, տերության կազմավորումը: <<Հելլենիզմ>> հասկացությունը:

Հելլենիստական աշխարհը: Պետությունները. Եգիպտոս, Սելևկյան պետություն: Հելլենիստական մշակույթի կենտրոնները. Ալեքսանդրիա, Անտիոք, Պերգամոն:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 5. **ՀԻՆ ՀՌՈՄ** (8 **ԺԱՄ**)

Պատմության արշալույսը: Հին Իտալիա. բնական պայմանները և ազգաբնակչությունը: Հռոմը թագավորական դարաշրջանում: Հանրապետական կարգի հաստատումը:

Հռոմեական քաղաք-պետությունը Ք.ա. V-II դարերում: Պատրիկների և պլեբեյների պայքարը: Պետական կառույցը, բանակը: Պայքար Կարթագենի դեմ: Միջերկրածովյան ավազանի նվաճումը: Քաղաք-պետությունից դեպի տերություն:

Հանրապետական կարգի ճգնաժամը և դրա հաղթահարման փորձերը (Գրաքոսների բարեփոխությունները, Սուլլայի դիկտատուրան): Սպարտակի ապստամբությունը:

Անցում պրինցիպատին: Առաջին եռապետությունը: Քաղաքացիական պատերազմը և Կեսարի բռնապետությունը (դիկտատուրա): Մենիշխանության հաստատումը Հռոմում. Օկտավիանոս (Օգոստոս): Պրինցիպատ:

Կայսրության ծաղկումն ու անկումը: Կայսրության <<ոսկեդարը>>: Ճգնաժամը և դրա հաղթահարման փորձը. Դիոկղետիանոս: Բարբարոսների արշավանքները, տերության բաժանումը, Արևմտահռոմեական կայսրության անկումը (476 թ.):

Կրոնը: Բազմաստվածություն: Քրիստոնեության առաջացման և տարածման պատմական պայմանները:

Հռոմեական մշակույթը: Կրթությունը: Գրականությունը: Գիտությունը: Ճարտարապետությունը և կերպարվեստը:

Կրկնություն (1 **ժամ**)
Ամփոփում (1 **ժամ**)

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(VII **դասարան**, **շաբաթական** 1 **ժամ**, **տարեկան** 34 **ժամ**)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ԺԱՄ)

Միջին դարերի պատմության հիմնական փուլերը, բովանդակությունը:

ԲԱԺԻՆ 1. ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐ (7 ԺԱՄ)

Ճակատամարտ Հռոմի համար: Ժողովուրդների մեծ գաղթը: Բարբարոսները Իտալիայում:

Քրիստոնեական եկեղեցին: Քրիստոնեական եկեղեցու կառույցը: Եկեղեցին Արևմուտքում: Եկեղեցին Արևելքում:

Բյուզանդիան Հուստինիանոս Ի-ի դարաշրջանում: Հուստինիանոս Ի-ի ներքին և արտաքին քաղաքականությունը: Բյուզանդիայի վերելքը: Բարսեղ Ի: Հայկական (Մակեդոնական) Վերածնունդը:

Ֆրանկները: <<Ծույլ թագավորները>>: Կարլոս Մեծի պատերազմները: Վերդենի բաժանքը: Կարոլինգյան Վերածնունդը:

Սրբազան Հռոմեական կայսրությունը: Գերմանական պետության առաջացումը: Սրբազան Հռոմեական կայսրության ստեղծումը:

Վիկինգների դարաշրջանը: Անհանգիստ քոչվորները: Արևմտյան և հարավային սլավոնները: Վիկինգների դարաշրջանը:

Հին Ռուսիան: Հին Ռուսիայի ծնունդը: Ռուսիայի մկրտությունը: Յարոսլավ Իմաստուն. <<Ռուսկայա պրավդա>>:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 2. ՄԻՋՆԱԴԱՐԸ ԾԱՂԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (6 ԺԱՄ)

Ավատատիրական հասարակարգը: Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը. աստիճանակարգությունը: Գյուղական համայնքը: Միջնադարի քաղաքները, համքարություններ:

Խաչակիրներ: Խաչակրաց արշավանքների նախադրյալները: Առաջին արշավանքը. խաչակրաց պետությունների առաջացումն Արևելքում: Խաչակրաց շարժման արդյունքները:

XIII դարի նշանավոր փիրակալները: Պապականությունը հզորության գագաթնակետին: Ֆրիդրիխ II: Լյուդովիկոս IX:

Քրիստոնեական եկեղեցու պառակտումը: Եկեղեցու պառակտումը 1054 թվականին. կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիներ: Հերետիկոսներ. ինկվիզիցիա: <<Մուրացիկ>> միաբանություններ:

Համալսարանները: Վաղ միջնադարի դպրոցը: Համալսարանների առաջացումը: Համալսարանական կրթությունը:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 3. ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՇՈՒՆԸ (5 ԺԱՄ)

Դասային միապետությունը: Ավատատիրության անկումը: Դասային միապետության առաջացումը:

Ազգային պետությունների կազմավորումը: Ազգային պետությունների առաջացման նախադրյալները: <<Ազգային հերետիկոսություններ>>: Եվրոպայի ազգային պետությունները:

Հարյուրամյա պատերազմը: Պատերազմի պատճառները և սկիզբը: Ժաննա դ'Արկ: Պատերազմի ավարտը. Ֆրանսիայի միավորումը:

Բյուզանդիայի անկումը: Լատինական կայսրությունը: Օսմանյան նվաճումները Բալկաններում: Կ. Պոլսի անկումը:

Ռուսական կենտրոնացված պետության կազմավորումը: Մոսկվայի բարձրացումը և դրա նախադրյալները: Իվան IV: Ռոմանովների արքայատոհմի հաստատումը:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 4. ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ (4 ԺԱՄ)

Արաբական խալիֆայությունը: Իսլամի առաջացումը: Արաբական նվաճումները: Խալիֆայության կազմավորումը: Խալիֆայության մասնատումը: Կորդովայի խալիֆայությունը: Ռեկոնկիստա: Արաբական մշակույթը:

Անհանգիստ քոչվորները: Սելջուկ-թյուրքերը: Մոնղոլական տերությունը: Օսմանյան տերությունը:

Հնդկաստանը, Չինաստանը և Ճապոնիան միջնադարում:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 5. ՆՈՐ ԵՎՐՈՊԱՅԻ ԾՆՈՒՆԴԸ (5 ԺԱՄ)

Աշխարհագրական մեծ հայտնագործությունները: Աշխարհագրական հայտնագործությունների նախադրյալները: Ամերիկայի հայտնագործումը: Մինչկոլումբոսյան քաղաքակրթությունները. ացտեկներ, մայաներ, ինկեր:

Վերածնունդ: Վերածննդի նախադրյալները: Գրականությունը: Արվեստը: Հյուսիսային Վերածնունդը:

Ռեֆորմացիա: Լյութերական եկեղեցու առաջացումը: Ժան Կալվին: Ռեֆորմացիան Անգլիայում: Հակառեֆորմացիա:

Նոր Եվրոպայի ծնունդը: Նիդերլանդական հեղափոխությունը: Երեսնամյա պատերազմը: Եվրոպայի քաղաքական նոր քարտեզը:

Նոր գիտությունը: Առաջին գիտական հեղափոխությունը: Նոր գիտության հիմնադիրները. Նիկողայոս Կոպեռնիկոս. Ջորդանո Բրունո, Գալիլեո Գալիլեյ, Ֆրենսիս Բեկոն:

Կրկնություն (1 **ժամ**)
Ամփոփում (1 **ժամ**)

ՆՈՐ ԴԱՐԵՐ

(VIII **դասարան**, **շաբաթական** 1 **ժամ**, **տարեկան** 34 **ժամ**)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ԺԱՄ)

Արդյունաբերական հասարակությունը, դրա զարգացման շրջափուլերը: Հասարակական-քաղաքական գործընթացները նոր դարերում:

ԲԱԺԻՆ 1. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՓՈՒԼԸ (XVII ԴԱՐ - XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍ) (13 ԺԱՄ)

Արմատական տեղաշարժեր տնտեսության մեջ: Տեխնիկայի առաջընթացը: Գյուղատնտեսության վերազինումը: Արդյունաբերական հեղաշրջումը:

Արդյունաբերական զարգացման արդյունքները: Փոփոխություններ հասարակական կյանքում: Քաղաքների զարգացումը: Մարդկանց կենսապայմանների բարելավումը:

Լուսավորության դարաշրջանը: Լուսավորական գաղափարախոսությունը: Լուսավորյալ արքաների դարաշրջանը:

Հասարակության վերակառուցման հեղափոխական ուղին: <<Հեղափոխություն>> հասկացությունը: Անգլիական հեղափոխությունը: Սահմանադրական միապետության հաստատումն Անգլիայում: Հյուսիսամերիկյան գաղութների ազատագրական պատերազմը և ԱՄՆ-ի ձևավորումը:

Ֆրանսիական մեծ հեղափոխությունը: Նախադրյալները և սկիզբը: Հեղափոխության սահմանադրական շրջափուլը: Միապետության անկումը: Հեղափոխության հանրապետական շրջափուլը (1792-1799 թթ.):

Կրկնություն (1 **ժամ**)

Նապոլեոնի դարաշրջանը: Նապոլեոնի վարչակարգը, բարեփոխումները: Պատերազմները, կայսրության կազմավորումը և հեղափոխական գաղափարների տարածումը Եվրոպայում: Կայսրության կործանումը:

Հեգեմոնությունը, հեղափոխությունը և հասարակական փոխհամաձայնությունը Եվրոպայում (1815-1850 թթ.): Վիեննայի վեհաժողովը և <<Սրբազան միության>> կազմավորումը: Անգլիան և հասարակության զարգացման բարեփոխումների ուղին:

Ժողովրդավարական և ազգային հեղափոխությունները Եվրոպայում: 1848–1849 թթ. հեղափոխությունը Ֆրանսիայում: 1848–1849 թթ. հեղափոխական իրադարձությունները գերմանական պետություններում: Ազգային հեղափոխությունները Եվրոպայում:

Արևելքի ավանդական հասարակությունները (XVII-XIX դարի առաջին կես): <<Ավանդական հասարակություն>> հասկացությունը: Օսմանյան կայսրությունը: Իրանը: Հնդկաստանը: Չինաստանը:

Միջազգային հարաբերությունները (XVII դարից մինչև XIX դարի կեսը): Հարաբերությունների ձևերը և կարգավորման հիմքերը: Գաղութային համակարգի ձևավորման սկիզբը:

Մշակույթը (XVII դարից մինչև XIX դարի կեսը): Կրթական համակարգը. դպրոցներ, համալսարաններ: Հիմնարար գիտությունների զարգացումը: Հումանիտար գիտությունների զարգացումը: Գեղարվեստական գրականությունը: Երաժշտությունը, կերպարվեստը: Ճարտարապետությունը:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 2. ԱՌԱՋԱՎՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ (15 **ժամ**)

Արդյունաբերական հասարակության զարգացման երկրորդ շրջափուլը: <<Եվրոպա>> հասկացությունը. ընդհանուրը և առանձնահատուկը: Աշխարհի անհավասարաչափ զարգացումը:

Փոփոխություններ տնտեսության մեջ և սոցիալական կառուցվածքում: Գիտության և տեխնիկայի նվաճումները, դրանց կիրառումը արտադրության մեջ: Տնտեսական զարգացման գլխավոր արդյունքները: Սոցիալական տեղաշարժերը:

Քաղաքական կյանքի զարգացումը: Պահպանողականներ և ազատականներ (լիբերալներ): Կուսակցությունների ստեղծումը և դերը քաղաքական կյանքում: Ընտրական իրավունքի ընդլայնումը: Բանվորական շարժումները և նրանց գաղափարախոսները:

Հասարակական-քաղաքական շարժումները Եվրոպայում և ԱՄՆ-ում: Ստրկության վերացումն ԱՄՆ-ում: Հասարակական ճգնաժամը Ֆրանսիայում. Փարիզի կոմունան: 1905-1907թթ. հեղափոխությունը Ռուսաստանում:

Ազգային նոր պետությունների առաջացումը Եվրոպայում: Գերմանիայի միավորումը (Օ. Բիսմարկ): Իտալիայի միավորումը (Ջ. Գարիբալդի): Սերբիայի, Ռումինիայի և Բուլղարիայի անկախության նվաճումը: Բալկանյան ժողովուրդների անկախության գործընթացի ավարտը, արդյունքները:

Ազգային հիմնախնդիրը բազմազգ պետություններում: Բազմազգ պետություն: Ավստրո–Հունգարիա երկմիասնական պետության առաջացումը: Ռուսական կայսրությունը:

Կրկնություն (1 **ժամ**)

Արևելյան հասարակությունների արդիականացման փորձերը: Օսմանյան կայսրության բարեփոխումների ձախողումը: Երիտթուրքական շարժումը, 1908թ. հեղաշրջումը: 1905-1911 թթ. իրանական հեղափոխությունը: Ճապոնիայի նորացումը և հզորացումը: Չինաստանի հասարակական-քաղաքական բարեփոխման գործընթացը:

Միջազգային հարաբերությունները XIX դարի վերջին և XX դարի սկզբին: Աշխարհի գաղութային բաժանման ավարտը: Հակասությունների սրումը տերությունների միջև: Հարաբերությունների կարգավորման նոր փորձերը: Ռազմաքաղաքական դաշինքների առաջացումը:

Առաջին աշխարհամարտը: Պատերազմի պատճառները, սկիզբը, գլխավոր ռազմաճակատները: Ռազմական գործողությունների գլխավոր հանրագումարները: Առաջին աշխարհամարտի ավարտը և հետևանքները:

Արդյունաբերական առաջավոր երկրների մշակույթը XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին: Կրթության և գիտության զարգացումը: Հիմնարար և հումանիտար գիտությունները: Գրականությունը: Թատրոնը, երաժշտությունը, կերպարվեստը, կինոն: Ճարտարապետությունը:

Կրկնություն (1 **ժամ**)

Ամփոփում (1 **ժամ**)

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(IX **դասարան**, **շաբաթական** 1 **ժամ**, **տարեկան** 34 **ժամ**)

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (1 ԺԱՄ)

<<Նորագույն պատմություն>> հասկացությունը: Արդյունաբերական հասարակության երրորդ շրջափուլը: Հետարդյունաբերական հասարակությունը:

ԲԱԺԻՆ 1. ԱՇԽԱՐՀԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՓՈՒԼՈՒՄ (12 ԺԱՄ)

Փարիզի վեհաժողովն ու նոր աշխարհակարգը: Վերսալ-վաշինգտոնյան համակարգը որպես նոր աշխարհակարգ: Ազգերի լիգա:

Արևմտյան ժողովրդավարական հասարակությունները 1920-ական թվականներին: Տնտեսական իրավիճակը: Քաղաքական զարգացման միտումները. Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, ԱՄՆ: <<Փոքր ժողովրդավարական հասարակությունները>>:

Ժողովրդավարական հասարակությունները և տնտեսական մեծ ճգնաժամը: Ճգնաժամի պատճառները: Նախագահ Ֆ. Ռուզվելտի <<Նոր կուրսը>>: Ճգնաժամը Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում: <<Փոքր ժողովրդավարական հասարակությունները>> և ճգնաժամը:

Ամբողջատիրական վարչակարգերը Եվրոպայում: Ամբողջատիրության (տոտալիտարիզմ) բովանդակությունը: Ֆաշիզմն Իտալիայում: Նացիոնալ-սոցիալիզմը Գերմանիայում:

ԽՍՀՄ-ը 1922-1939 թվականներին: ԽՍՀՄ կազմավորումը: Տնտեսության վերականգնումը. Նէպ-ի տարիները: Արդյունաբերացումը և կոլեկտիվացումը: Քաղաքական համակարգը (ամբողջատիրություն): Սոցիալիզմի խորհրդային մոդելը:

Կրկնություն (1 **ժամ**)

Արևելքի ավանդական հասարակությունները և արդիականացումը: Քեմալական Թուրքիան: Իրանի արդիականացման միտումները: Ծագող արևի երկիրը: Չինաստանը՝ հավասար հնարավորությունների երկիր: Հնդկաստանը Բրիտանական կառավարման ներքո:

Մշակույթը 1920-1930-ական թվականներին: Հիմնարար գիտությունները: Հումանիտար գիտությունները: Գրականությունը և արվեստը:

Միջազգային հարաբերությունները: Միջազգային հարաբերությունները 1920-ական թթ.: Վերսալ-վաշինգտոնյան համակարգի փլուզումը: Խաղաղեցման քաղաքականության ձախողումը, <<Մյունխենյան գործարքը>>: Խորհրդա-գերմանական համաձայնագիրը:

Երկրորդ աշխարհամարտը: Աշխարհամարտի պատճառները, հակամարտող դաշինքները: Պատերազմի առաջին շրջափուլը և դրա արդյունքները: ԽՍՀՄ հայրենական մեծ պատերազմը: Հակահիտլերյան միությունը: Պատերազմի հետագա ընթացքը: Երկրորդ աշխարհամարտի ավարտը և արդյունքները:

Կրկնություն (1 **ժամ**)

Ամփոփում (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 2. ԱՇԽԱՐՀԸ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (9 ԺԱՄ)

Սառը պատերազմը: Սառը պատերազմն ու երկբևեռ աշխարհի ձևավորումը: ՆԱՏՕ և Վարշավյան դաշինք:

Արևմուտքի երկրները 1945-1980-ական թվականներին: Տնտեսական և քաղաքական զարգացման առանձնահատկությունները: ԱՄՆ-ը: Եվրոպական երկրները. Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա:

ԽՍՀՄ-ը 1945-1985 թվականներին: ԽՍՀՄ-ը հետպատերազմյան առաջին տարիներին: <<Ձնհալի շրջանը>>: Լճացման տարիները:

Վերակառուցունից դեպի փլուզում: Վերակառուցման քաղաքականությունը: Խորհրդային Միության փլուզումը, ԱՊՀ-ի ստեղծումը:

Սոցիալիստական համակարգը: Սոցիալիզմի խորհրդային մոդելի հաստատումը եվրոպական երկրներում: Սոցիալիստական համակարգը, դրա փլուզումը:

Երրորդ աշխարհը: Գաղութային համակարգի փլուզման պատճառները և հետևանքները: Երրորդ աշխարհը:

Արդիականացող Արևելքը: Իրան: Թուրքիա: Արաբական աշխարհի զարգացման միտումները: Արդիականացման չինական մոդելը: Ճապոնիայի թռիչքաձև զարգացումը: Հնդկաստանի արդիականացման գործընթացը:

Միջազգային հարաբերությունները սառը պատերազմի տարիներին: Միավորված ազգերի կազմակերպությունը: Խաղաղության հիմնախնդիրը: Տարածաշրջանային պատերազմներ, ազգամիջյան բախումներ:

Կրկնություն (1 **ժամ**)

ԲԱԺԻՆ 3. ԱՇԽԱՐՀԸ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ (6 ԺԱՄ)

Արևմուտքի երկրները 1991 թվականից մինչև մեր օրերը: Արևմուտքի երկրների տնտեսական և քաղաքական զարգացման առանձնահատկությունները: Եվրոպական Միությունը: Արևմուտքի զարգացած երկրները. ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա:

Հետխորհրդային երկրները 1991 թվականից մինչև մեր օրերը: Հետխորհրդային երկրների քաղաքական և տնտեսական զարգացման առանձնահատկությունները: ԱՊՀ-ն 1991 թվականից մինչև մեր օրերը: Հայաստանը և ԱՊՀ երկրները:

Միջազգային հարաբերությունները հետպատերազմյան շրջանում: Նոր աշխարհակարգի խնդիրը: Ուժերի նոր հարաբերակցությունը: Փոփոխություններ միջազգային հարաբերություններում: Արդի աշխարհի հիմնախնդիրները:

Համաշխարհային մշակույթը XX դարի երկրորդ կեսին-XXI դարի սկզբին: Մշակույթի զարգացման նոր միտումները: Հիմնարար գիտությունները: Հումանիտար գիտությունները: Գրականությունը: Գեղանկարչությունը, երաժշտությունը, թատրոնը, կինոարվեստը: Ճարտարապետությունը: Փոփոխություններ մարդկանց ապրելակերպում:

Կրկնություն (1 **ժամ**)

Ամփոփում (1 **ժամ**)